

4.1.211
Ф.И.Р.У.

ИЗДАТЬ СОВЪЕ

Французская прозаическая пьеса:

ГАРАМЪ

ПРАЗДНИКЪ СОВЪСТИ

Драма въ пяти дѣйствіяхъ.

891.99
9-34

БАКУ, ТИПОГРАФІЯ „ТРУДЪ“.

1891.99

01 JAN 2009

4/209
2011

Գ-34

ԳԱՐԱՄ (Յ. Ք—Կի):

Նվիրատ է իմ ընկեր

ԲԱԳԻԱԴ ՏԵՐ-ՍԱՀԱԿԵԱՆՑԻՒՆ:

ԽՂՃԻ ՏՕՆԼ

100/
376

Դրամա հինգ զործողութեամբ:



Յարգելի լեբեցող!

Ներպութիւն են խնդրում
զբի մէջ սպանած սպա-
գական սխալների համար:

Հեղինակ:

Настоящая пьеса, подъ заглавием „ПРАЗДНИКЪ СОВѢСТИ“ соч. И. ГАРАМА разрѣшена НАМѢСТНИКОМЪ ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА на Кавказѣ для представлениѧ на сценахъ края,

13 Января 1910 года, гор. Тифлисъ.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ:

ԳՐԻԳՈՐ ՄԱԿԱՐԵԱՆ

ՀՈՓՓՍԻՄԿ, ճրա կինը

Ա.Դ.Բ.ՅԱՆԴՐ

ԿԱՏԵԱ

ՍՈՒՐԵՆ

արանց զաւակները

ՍՈԹԵՆԻԿ, Աղեխանդրի կինը

ՊԵՏՐՈՍ

ՄԻՆԱՍ

ԶԱԿՈԲԵԱՆ, զործարանի կառավարիչ

ՄԻՔԱՅԵԼ

ՌՈՒԲԵՆ

Ա.ՐԱԽԻՆ

ՇԱՌԱՅ

ՏԵՍԻ 1

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Տեսարանը ներկայացնում է Մալարեանի բնակարանը. մեծ դահլիճ, հարուստ եւ նոխ կահ-կարասիքով: Մեջտեղ մի դուռ, որը տանում է սեղանատուն: Դուռ՝—աջ անկիւնում, դեպի նախասենեակ. ձախ՝—նախասենեակում, Մալարեանի հառանձասենեակի դուռը. դեպի փողոց երկու պատուհան:



(Աղէքսանդրը մենակ. կարդում է ինչոր նամակ, քիչ յետոյ զալիս է Սամենիկը):

ՍԱԹԵՆԻԿ. Այդ ի՞նչ նամակ է:

Ա.Ղ.Է.ՔՍԱՆԴՐ. Ոչինչ, այնպէս, կարեոր բան չէ:

ՍԱԹԵՆԻԿ. Միթէ ինձնից գատղնիք է:

Ա.Ղ.Է.ՔՍԱՆԴՐ. Ոչ, բայց քեզ հետաքրքիր բան չէ:

ՍԱԹԵՆԻԿ. Ուրեմն գաղտնիք է: Ես գիտեմ, դու ինձ չես սիրում, բայց ի՞նչու իս կեղծում:

Ա.Ղ.Է.ՔՍԱՆԴՐ. Թող Աստած սիրես: 2է որ երեկ խայ չես:

ՍԱԹԵՆԻԿ. Այժմ կարող ես երեխայ անւանենինձ, որովհետեւ դեռ շարունակում եմ հաւատալ քեզ:

Ա.Ղ.Է.ՔՍԱՆԴՐ. 2է որ, ես քեզ չեմ դաւաճանում

ՍԱԹԵՆԻԿ. (Հնգնանքով) Ի՞նչպէս չէ: Ես հաւատում եմ:

Ա.Ղ.Է.ՔՍԱՆԴՐ. Դու ինձ տանջում ես:

ՍԱԹԵՆԻԿ. Բայց դու, դու ինձ սպանում ես:

Ա.Ղ.Է.ՔՍԱՆԴՐ. 2է որ ես քեզանից ոչինչ չեմ լինայում: Կամենում ես այսօր կլուր գնալ:

ՍԱԹԵՆԻԿ. Ոչ, մնայ և դու տանը:

Ա.Ղ.Է.ՔՍԱՆԴՐ. Գիտես, որ ես անկարող եմ մնալ տանը: Ես զարմանում եմ, չեմ հասկանում, դու ինչու միշտ հակառակում ես ինձ: Երեկ չեկար կլուր, այսօր չես զալիս, վերջապէս սա ատնջանք է:

ՍԱԹԵՆԻԿ. ԶԵ՞ որ գալիս եմ մնում միայնակ այն-
տեղ, զու քո թուխան ես խաղում, իսկ ես ստիպւած եմ
լինում մինչև ժամը երեք-չորսը սպասել քեզ:

Ա.Լ.Ք.ԲՍԱՆԴՐ. Խնչպէս կամենաս: Ներկր ինձ, ես
անկարող եմ մնալ տանը, որովհետեւ այստեղ կեանք չ'կայ:

ՍԱԹԵՆԻԿ. Ապա ո՞բաեղ է կեանքը:

Ա.Լ.Ք.ԲՍԱՆԴՐ. Այնտեղ: Բարի գիշեր: (Գնում է):

ՍԱԹԵՆԻԿ. Աստւած իմ, այս ինչ տանջանք է: Նա ինձ
չի սիրում, նա ասաց կեանքը այնտեղ է. բայց այստեղ:
Աստեղ ուրեմն նրա համար բովէական է. նրա համար
կեանքը այնտեղ է, այն կանանց մէջ, որոնք սպասում են
նրան: (Լաց է լինում):

ՏԵՍԻԼ. 2

(Մտնում է Կատեան):

ԿԱՏԵԱ. Դուք լոց էք լինում, հանգստացէք: Բայց
ուր է Աղէքսանդրը, չէ՞ որ նա այս բովէիս այստեղ էք:

ՍԱԹԵՆԻԿ. Նա գնաց:

ԿԱԹԵԱ. Ո՞ւր:

ՍԱԹԵՆԻԿ. Այնտեղ:

ԿԱՏԵԱ. 2եմ հասկանում:

ՍԱԹԵՆԻԿ. Այս Կատեա, ես տանջում եմ: Աղէք-
սանդրը ուրիշին է սիրում:

ԿԱՏԵԱ. Ոչինչ, կը զայ ժամանակ, նա կ'զըդի
ուրիշներից, չէ՞ որ ընկածներին միշտ սիրել չի լինի:

ՍԱԹԵՆԻԿ. Կատեա երեք չը ամուսնանաս, այն մար-
դու հետ՝ որը քեզ չի սիրի:

ԿԱՏԵԱ. Ես զիտեմ, տղամարդիկ բոլորնէլ անպի-
տաններ են, երեք մէկին չեն սիրում:

ՏԵՍԻԼ. 3

(Մտնում է Սուրէնը):

ՍՈՒՐԷՆ. Կանալք աւելի անպիտաններ են քան
տղամարդիկ:

ԿԱՏԵԱ. Ի՞նչ է, մեղ գաղտագողի լսում էիր:

ՍՈՒՐԷՆ. Ինչ արած: Երկու օրիորդներ ինձ խա-
րել են: Կանանց ձեռից այրւած եմ:

ԿԱՏԵԱ. Ի՞նչ են արել քեզ:

ՍՈՒՐԷՆ. Կասեմ ինչ են արել: Մէկ օրիորդ քիթն
էլ մի քիչ մեծ և ծուռ, իրը թէ սիրահարած էր ինձ հետ,
խօսում էր, զահլա էր տանում և այն... Մի քանի ժամա-
նակ անցաւ, հէնց որ ինձանից լային գտաւ, էլ ասում է,
մնաս բարով Սուրէն: Սնցաւ մի քանի ամիսներ, մի ուրիշը
պատահեց, ճիշան ասաց երկրորդը չափազանց գեղեցիկ
էր: Նա էլ՝ այ սիրում եմ քեզ, զու ես ամբողջ աշխարհում
ինձ համար, այնպէս որ ինձ տրամագրեց դէպի իրեն և ես
յիմարս զիշեր ու ցերեկ քուն չունէի նրա համար մտածելուց:
Եւ ինչ ակսայ, մի փառաւար օր, մի յիմարի հետ թեւան-
ցունկ ման է գալիս: Ի՞նարկէ, իմ բարոյական պարտա-
կանութիւնս էր մօտենալ և բացազրութիւն պահանջել
նրանից, որովհետեւ նոյն ժամին ժամագիր էր եղած ինձ
հետ: Ես մօտեցայ և բացազրութիւն պահանջեցի նրանից:
պարոնը պաշտպան հանդիսացաւ նրան և ի՞նարկէ իմ ծանր
ապահով կըպաւ նրա չօփուր երեսին: Այն դէպից յետոյ,
ես ատում եմ կանանց:

ԿԱՏԵԱ. Իսկ զուք տղամարդիք ամենաստոր արա-
րածներն էք աշխարհում:

ՍՈՒՐԷՆ. Դուք էլ պակաս չէք:

ԿԱԹԵԱ. Յիմար: Թող մեղ հանգիստ:

ՍՈՒՐԷՆ. Ես ցանկանում եմ այստեղ մնալ:

(Գնում է Սամենիկը և քիչ յետոյ Կատեան):

Ի՞նչ էք կարծում, ուժեղը մինք ենք թէ սրանք: (Ծխում է և շրջում դահլիճում):

Մի քանի օրից կլսկըսի իմ երջանիկ օրերը, որովհետեւ այսօր տեսուչը յայտնեց, եթէ շալունակ եմ կրկին ծոյլութիւն անել, անպատճառ ինձ կ վոնդեն: Ես հինգ այսպէս բանի եմ սպասում, որ ինձ գիմնազիայից դուրս հանեն: Կարծես կեանքը կարդալու մէջն է:

ՏԵՍԻ. 4

(Մտնում է Գրիգորը):

ԳՐԻԳՈՐ. Զը գիտես ի՞նչու հտմոր է կանչել ինձ տեսուչը:

ՍՈՒՐԵՆ. Զը գիտեմ:

ԳՐԻԳՈՐ. Երկի՝ դարձեալ յիմարութիւններ ես արել. պնայ կորիր, աչքս քեզ չը տեսնի:

(Մուրէնը գնում է):

ԳՐԻԳՈՐ. Երկու տղայ ունինաս և այն էլ փուչ, էլ ում համար տանջել: Մէկը թխատասպումն է փշացնում, երկրորդը նոյնպէս, իսկ ես յիմարս աշխատում եմ սրանց համար որպէսպի երջանիկ ապրեն:

ՏԵՍԻ. 5

(Մտնում է Կատեան):

ԿԱՏԵԱ. Հայրիկ կաթը պատրաստ է:

ԳՐԻԳՈՐ. Գալիս եմ աղջիկս: (Գնում է, քիչ յետոյ մտնում է Մուրէնը):

ՍՈՒՐԵՆ. (Կողմը): Բանքս բուրդ է, տեսուչը պիտի գանգատի հօրս: Ե՛ ոչինչ, հոգս չեմ անում, մի փոքր կը չարանայ և յետոյ կ'անցնի:

ԿԱՏԵԱ. Տեսուչը կանչել է հայրիկին:

ՍՈՒՐԵՆ. Գիտեմ:

ԿԱՏԵԱ. Ճոյլ:

ՍՈՒՐԵՆ. Քո գործը չէ: Այնպէս արա, որ քո գաղտնիքները չը բացեմ:

ԿԱՏԵԱ. Ի՞նչ գատնիզներ:

ՍՈՒՐԵՆ. Ես գիտեմ թէ ինչ զախանիքներ են: Լեռնը ի՞նչու է թափառում մեր պատռհանի տակ:

ԿԱՏԵԱ. Միթէ ես կարող եմ արգելել նըան, որ նա մեր վոռոցով չ'անցի:

ՍՈՒՐԵՆ. Ես բոլորը գիտեմ, բայց լուսում եմ, որովհետեւ չեմ ուզում խանգարել քեզ:

ԿԱԹԵԱ. Դու սուտ ես խօսում: (Լաց է լինում):

ՍՈՒՐԵՆ. Կանանց լացը ինձ յայտնի է, դորանով չես կարող խարել ինձ և կակել իմ սիրտը:

ՏԵՍԻ. 6

(Մտնում է Սամենիկը):

ՍՈՒՐԵՆԻԿ. Ի՞նչու ես թշնամարար վարւում քարոզ հաս, չէ՞ որ նա քեզ ոչինչ չի արել:

ՍՈՒՐԵՆ. Ես ինձնից զանգատել է հայրիկին:

ՍՈՒՐԵՆԻԿ. Դու սուտ ես խօսում, տեսուչը ինքն է գրել հայրիկին:

ՍՈՒՐԵՆ. Համբերեցէք, շուտով ես գիմնազիայից դուրս կը գամ և ցոյց կըտամ ձեզ. կեանքը ուսումի մէջ չէ:

ՍՈՒՐԵՆԻԿ. Քեզանից միենոյն է ոչինչ բան գուրս չի գալ:

ՍՈՒՐԵՆ. Եազրեցէք, ծաղրեցէք, զուք կը տեսնեք:

ՏԵՍԻԼ 7

(Մտնում է Գրիգորը զերարկուով, դլխարկը ժեռքին):
 ԳՐԻԳՈՐ. (Սուրբնին) Վերցրու դլխարկդ: Գհանք, դու
 ոքդի չես, այլ մի վառ կրակ:
 ՍՈՒՐԵՆ. Հայրիկ այս ժամանակ մւր գնանք:
 ԳՐԻԳՈՐ. Առան հակածառելու: Դէ գհանք:
 ՍՈՒՐԵՆ. Գնայ առանց ինձ, հայրիկ:
 ԳՐԻԳՈՐ. Չայնդ, առաջ անցիր, անիլաւ:
 ԿԱՏԵԱ. Հայրիկ, երեկոյ է, մնայ, վազը կը գնաս, չը
 որ մենք էլ մենակ ենք առանց:
 ԳՐԻԳՈՐ. Լաւ աղջրկս, ես կը մնամ. ես քեզ սի-
 րում եմ, միայն դու ես իմ միտթարանքը (Սուրբնին): Գնայ
 կորիր աշքիցս: Ո՞ւր գհաց Ազէրսանդը:

(Սուրբնը գնում է):

ՍՈՒՐԵՆԻԿ. Կուր:

ԳՐԻԳՈՐ. Իսկ զմու քեզ մենակ թողաւ առանց:
 ՍՈՒՐԵՆԻԿ. Ես ինքս մերժեցի գնալ հետք:
 ԳՐԻԳՈՐ. Ժամը քանիսն է:
 ՍՈՒՐԵՆԻԿ. Ութը:
 ԳՐԻԳՈՐ. Կառեա, ձայն առու ծառային:
 ԿԱՏԵԱ. Իսկոյն: (Գնում է):

ՏԵՍԻԼ 8:

(Կառեան և ծառան):

ԳՐԻԳՈՐ. Առ այս վողը (տալիս է ծառային) գնա շուտ
 թատրուն տօմսակ գնի, իսկ զուք պատրաստեցեք մինչեւ
 նրալ գալը: (Ծառան գնում է) Ինչ են խաղում այսօր:

ՍՈՒՐԵՆԻԿ. «Եղջանկութեան համար»:
 ԳՐԻԳՈՐ. «Եղջանկութեան համար», լաւ է: (Սահենիկը
 և Կառեան գնում են):

(Մտնում է Սուրբնը):
 ՍՈՒՐԵՆ. Հայրիկ, ես էլ պիտի գնամ թատրոն:
 ԳՐԻԳՈՐ. Ոչ, գնայ պատրաստիր զասերդ: Կորիր:
 Սուրբնը (Գնում է):

ՏԵՍԻԼ 9

(Մտնում է Հոփիսիմէն):

ՀՕՓԻՓՍԻՄԵ. Նա լաց է լինում:

ԳՐԻԳՈՐ. Նա լաց է լինում, բայց ես, ես միթէ ծի-
 ծալում եմ, իմ սիրաը այնպիս է լաց լինում, որ ոչ մի
 մարդու աչքերը չեն կարող նրա պէս լաց լինել, բայց մեր
 զաւակները այդ չեն հառկանում: Պառաւ թող լաց լինի,
 լացից չի մեռնի:

ՀՕՓԻՓՍԻՄԵ. Նա ասում է ինձ ծովը կը գցեմ:

ԳՐԻԳՈՐ. Նա սպառնալիքներով ուզում է վախեցնել
 քեզ: Այդ բանը նա չի անիլ, հանդիսաւ եղիր, իսկ եթէ
 ծայրահեղ զէպքում յիմարութիւն կանի, ոչինչ, թող ինչ
 ուզում է անէ: Ինձ որպիր չունիմ, նրանք մեւած են
 ինձ համար:

ՀՕՓԻՓՍԻՄԵ. Կանչիր այսակդ, ներիր նրան, թող լաց
 չը լինի:

ԳՐԻԳՈՐ. Է՛ պառաւ, ինչովէս վախկոտն ես: (Կանչում է)
 Սուրբն, եկ այսակդ.

ՏԵՍԻԼ 10

(Մտնում է Սուրբնը աչքերը մաքրելով):

ԳՐԻԳՈՐ. Ի՞նչ է, հայրը միթէ չի կարող շարանալ

իր որդու վիայ. լաց ես լինում, ծանը է քեզ համար, բայց
ինձ համար որքան ծանը է: Գնայ լայ երեսդ, նկրում եմ
և պատրաստիր նրանց հետ թատրոնի գնալ:

ՍՈՒՐԵՆ. Ճնորհակալ եմ հայրիկ:

ԳՐԻԳՈՐ. Գնայ լաւ: (*Սուրէնը գնում է*): Ի՞նչ պիտի
անենք պառաւ, շուտով մենք կը մեռնենք և աստած գիտէ
մեղնից յետոյ ինչ կը դառնան մեր դաւակները:

ՀՈՒՓՍՄԵ. Բայց ուր գնաց Աղեքսանդրը:

ԳՐԻԳՈՐ. Կլուր, թուղթ խաղալու:

ՀՈՒՓՍՄԵ. Ի՞նչու չ'ասացիր գոնէ այս զիշեր թատ-
րոն գնար մերոնց հետ:

ԳՐԻԳՈՐ. Միթէ նա ինձ: կը լսի ես կարծէս հայր
չմինեմ, տանը բոլորն էլ ինձ ատում, արհամարում են: Ես
նրանց համար աշխատել եմ, բայց նրանք նրայ փոխարե-
նը ինձ ատում են:

ՀՈՒՓՍՄԵ. Ներկիր դու ամենքին:

ԳՐԻԳՈՐ. Վաղուց եմ ներել նրանց:

ՏԵՍԻ 11

(Մտնում է ծառան, տալով տոմսերը Գրիգորին):

ԳՐԻԳՈՐ. Կատեա, Սաթենիկ... պլծէր, երկի ժա-
մանակինէ:

ՏԵՍԻ 12

(Մտնում են Սաթենիկը, Կատեան և Սուրէնը):

ԳՐԻԳՈՐ. (Տալով տոմսերը, Սուրէնին) Պերցըս: Լաւ
պահիր քեզ, այնտեղի հասարակութիւնը ինձ ճանաչում է,
քրոջդ հետ չ'կուսու: Դէ՛ ճանապարհեցէք: Ժամը քանիսնէ:

ԿԱՏԵԱ. Ութ է կէս:

ԳՐԻԳՈՐ. Լաւ, բարի զիշեր. ճանապարհեցէք: (Գնում-
են Սաթենիկը, Կատեան և Սուրէնը):

ՀՈՒՓՍՄԵ. Քիչ պարկիր Գրիգոր:

ԳՐԻԳՈՐ. Կաթ կայ:

ՀՈՒՓՍՄԵ. Մի քիչ մնացել է:

ԳՐԻԳՈՐ. Լաւ, Գնանք: (Գնում ան:)

(Բեմը գատարկ է, լսում զանգակի ձայն, քիչ լետոյ գա-
լիս է աղախինը միւս սենեակից, գնում է և իսկոյն զալիս անց-
նում դարձեալ նոյն սենակը):

ՏԵՍԻ 13

(Մտնում է Մինար):

ՄԻՆԱՐ. Ի՞նչ է պատահել, ոչ ոք չ'կայ, քնած են
ինչ է: (Կանչում է) Անհա:

ՏԵՍԻ 14

(Աղախինը):

ԱՂԱԽԻՆ. Ի՞նչ էք հրամայում:

ՄԻՆԱՐ. Ո՞րտեղ են երիտառարգները:

ԱՂԱԽԻՆ. Մի քանի բովէ տուած թատրոն գնացին:

ՄԻՆԱՐ. Իսկ պառաւները:

ԱՂԱԽԻՆ. Նրանք տանն են: Յայտնել:

ՄԻՆԱՐ. Ոչ, հարկաւոր չէ անհապսացնել: Գործ-
ունիք գնացէք: (Աղախինը գնում է):

ՏԵՍԻ 15

(Հոփիսիմէն):

ՄԻՆԱՐ. Բարի երեկոյ քոյլ: (Զեռ է տալիս): Ի՞նչ է
փեսան հանկստանում է:

ՀՌԻՓՍԻՄԵ. Հա, Մինաս, Սուրէնը քիշ չաբացրել է
նրան:

ՄԻՆԱՍ. Նտ թուղտ է խաղում:

ՀՌԻՓՍԻՄԵ. (Զարձացած): Թո՞ւղտ է խաղում:

ՄԻՆԱՍ. Այս, ես զարմանում եմ, լինչու էք նրան
փող տալիս, դուք ինքներդ փչացնում էք ձեզ դատակին և
յիտոյ գանգատում. տասնը ութ տարեկան հաղիւ լինի և
նա արդէն պլոֆեսիօնալ խաղացող է:

ՀՌԻՓՍԻՄԵ. Ի՞նչ անեմ, զալիս է լաց լինում, հար-
կաւոր է առում է, այս պիտի առնեմ, այն պիտի առնեմ
և ես էլ տալիս եմ:

ՄԻՆԱՍ. Զեր տան քսակը մէկ պիտի լինի և ոչ թէ
քսանը: Վերջապէս տան զլխաւորը մէկ պիտի լինի, թէ
մի քանիսը:

ՀՌԻՓՍԻՄԵ. Այստեղ ամենն էլ խաղէլին են:

ՄԻՆԱՍ. Խեղճ մարդուն հիւանդացրել են, էլ լինչ
են ուղսւմ: Ի՞նչ կլինի եթէ վաղը կամ միւս օրը նրան մի
դժբախտութիւն պատահի, այն ժամանակ բոլորներտ կո-
րած էք: Ազեքսանդրը բացի թղատախաղից ուրիշ բանի պէտք
չէ, միւս փոքրն էլ նոյնպէս, Կատեան լաւ է, բայց աղջիկ
է, ուրեմն ինչ պիտի լինի: Դուք ինքներդ էք մերաւոքը,
որովհետեւ տասնութ տարեկան տղի ձեռքը այնքան էք
փող տալիս, որ նա զնում է այստեղ և այնտեղ թուղտ
խաղում: Նա երկք օր է զիմնազիայ չի զնում և դուք գի-
տէք արդեօք, ծնողի պարտականութիւնն է հիտեւ իր
զաւակին, բայց դուք այս բանի վրայ բոլորովին ուշագրու-
թիւն չէք դարձնում:

ՀՌԻՓՍԻՄԵ. Այսօր կանչել էր տեսուչը Գրիգորին,
ուղում էր զնալ կէս ժամ առաջ, բայց թողաւ տու-
տատեան:

ՄԻՆԱՍ. Երկի զիմնազիայից կ'ունդեն Սուրէնին:

ՀՌԻՓՍԻՄԵ. Ի՞նչ պիտի անի նա:

ՄԻՆԱՍ. Ման կը գայ փողոցները և դուք փող կը-
տաք նրան թուխտ կը խաղի:

ՀՌԻՓՍԻՄԵ. Նա իրան ծովը կը զցի:

ՄԻՆԱՍ. Թող Աստւած սիրես, այդպիսիները քաջու-
թիւն չեն ունենալ:

ՏԵՍԱԿ 16

(Մանուժ է Գրիգորը).

ԳՐԻԳՈՐ. Դու այստեղ ես: (Չեռ է տալիս) Զե՞ս երե-
ւում:

ՄԻՆԱՍ. Ժամանակ չ'կայ:

ԳՐԻԳՈՐ. Ի՞նչ է, տան քըենիները չես կարողանում
ժողովել: Տեսնում եմ բոլորդ դարձրել էք ձեր երեսը
ինձնից:

ՄԻՆԱՍ. Բոլորովին այսպէս չէ:

ԳՐԻԳՈՐ. Ի՞նչ է պատահել:

ՄԻՆԱՍ. Մենք կուել ենք:

ԳՐԻԳՈՐ. Ո՞ւմ հետ:

ՄԻՆԱՍ. Ազէքսանդրի:

ԳՐԻԳՈՐ. Հայհայել է քեզ:

ՄԻՆԱՍ. Ջատ խիստ:

ԳՐԻԳՈՐ. Նա յիմար է, ուշագրութիւն մի դարձնիլ
նրա վրայ:

ՄԻՆԱՍ. «Թալանում ես մեզ», ասում է:

ԳՐԻԳՈՐ. Ի՞նչու համար նա այս խօսքը ասաց:



- ՄԻՒԱՍ. Մեր մէջ փոքը հաշիւ կայ:
ԳՐԻԳՈՐ. Ճան է:
ՄԻՒԱՍ. Երկու հարիւր բուբլի:
ԳՐԻԳՈՐ. Պառաւ, տուր Մինասին երկու հարիւր
բուբլի:
ՄԻՒԱՍ. Ես չեմ վերցնիլ, ինքը կը տայ:
ԳՐԻԳՈՐ. Միմոյն չէ:
ՄԻՒԱՍ. Ոչ, նա աւելի կը շարանայ, թէ և ես այն-
քան ուշադրութիւն չեմ դարձնում նրա վրայ, բայց նա
երբեմն թոյլ է տալիս իրան հասարակութեան մէջ բղաւել,
իսկ սա ինձ համար հաճելի բան չէ:
ԳՐԻԳՈՐ. Ի՞նչպէս կամենաս: Ինչպէս են գնում գոր-
ծերդ:
ՄԻՒԱՍ. Ճնորհակալ եմ, փառք Տէրին: Լաւ է:
ԳՐԻԳՈՐ. Որդիկ աշխատասէր է:
ՄԻՒԱՍ. Այս, շատ գոհ եմ նրանից:
ԳՐԻԳՈՐ. Երկում է: Ես նրան սիրում եմ, բայց ի՞նչու
նա չի դալիս: Դու չես թողնում:
ՄԻՒԱՍ. Միշտ պարագում է:
ԳՐԻԳՈՐ. Ասա թող գայ միասին պարագուն մեր
անպիտանի հետ:
ՄԻՒԱՍ. Ես ուրախութեամբ, բայց ոսստիկ վախե-
նում եմ, որ Սուրբնը նրան թղամասղը սովորեցնի:
ԳՐԻԳՈՐ. Իրաւացի ես Մինաս, դու լաւ ես ասում,
իրաւոնք ունիս այս խօսքը ասելու: Լասում ես պատաւ, ինչ
է ասում եղայրդ, նա իրաւացի է:
ՄԻՒԱՍ. Դուք էք մեղաւորը վիսայ: Փողերը շպրտում
եք աջ-ձախ, չը պիտի փող տալ այնպիսի յիմարի ձեռքը:

ԳՐԻԳՈՐ. Հարցըու քրոջդ: Ես միշտ աշխատուիլի, որ
փուչ դուրս չը գան, բայց քո քոյրը մի ըուրլու փոխա-
րէն ատա է տւել. ասում է եկամուտներս շատ է, թող
միսեն, բէֆներին չգիպչենք: Ահա թէ վերջը ուր է տանում:
Այս երեկոյ, ես մտակիր չէի բաց թողնել նրան թատրոն,
բայց քոյրդ ստիպեց:

ՄԻՒԱՍ. Այսպէս անկարելի է: Երեկ Կատեան մեր
տանն էր, նա ասում է, Սուրբնը, մեղ խիստ տանջում է,
վիրաւորում է ամեն մի քայլափոխում: Նա եթէ փոքը լինի
կարելի է ներել:

ԳՐԻԳՈՐ. Է՛ Մինաս, Մինաս: Պառաւ, ընթրիք պա-
տրաստիր: Երկի Մինասն էլ քաղցած է:

ՄԻՒԱՍ. Ոչ, չնորհակալութիւն: Ինձ տանը սպա-
սում են:

(Հոփփումէն զնում է):

ԳՐԻԳՈՐ. Միմոյն չէ, կարող ես մեղ հետ ընթրել:
Ինչպէս ես կարծում Մինաս, կարող են մարդ դառնալ իմ
գաւակները:

ՄԻՒԱՍ. Ո՞վ կիտէ, գուցէ վերջը փոխւն:

ԳՐԻԳՈՐ. Այն ժամանակ, որ ես չսմանեսիլ: Ամենինչ
մեռէլ է նրանց մէջ, միայն աղջիկս է խելօք, այն էլ իմս չէ:

ՄԻՒԱՍ. Ես չի կամենում, ասել բայց ստիպւած եմ:

ԳՐԻԳՈՐ. Ի՞նչ կայ:

ՄԻՒԱՍ. Աղէքսանդրը սիրական ունի:

ԳՐԻԳՈՐ. (Չարմացած): Միլակնն:

ՄԻՒԱՍ. Այս:

ԳՐԻԳՈՐ. Խեղճ Սաթենիկ, տանջում է նրա
ձեռքին: Ասա Մինաս, խորհուրդ տուր ինձ, ի՞նչ անել:

ՄԻՒԱՍ. Արգին ուշ է, ոչինչ չի կարելի անել:
Թող Սաթենիկը այդ մասին ոչինչ չը իմանայ:

ԳՐԻԳՈՐ. Այս, ի՞նարկ է, բայց չէ որ նա պարտաւոր է իմանալ. ինչ օգուտ, որ ես գիտեմ, միևնոյնէ ես հայր շեմ նրա համար: Խեղճ իմ Սաթենիկ. դու զեռ երիտասարդ ես, քեզ հարկաւոր է կեանք:

8ԵՍՏԻ. 17

Մտնում է Հռիփսիմէն:

ՀՌԻՖՍԻՄԵ. Ընթըլիքը պատր աստ է, եկեք:

ԳՐԻԳՈՐ. Գնանք Մինաս, քեզ շատ չեմ պահիլ, քիչ կը խօսենք ընթըլիքի ժամանակ: (Գնում են, քեմը դատարկ է, քիչ յետոյ գալիս է աղախինը, միևնոյն ժամանակ լսում է զանգի ծայն, աղախինը գնում է):

8ԵՍՏԻ. 18

Ութենիկը, Կատեան և Սուրէնը, քիչ յետոյ աղախինը:

ԿԱՏԵԱ. Անեա, մերոնք քննել են:

ԱՂԱԽԻՆ. Ոչ օրիորդ, ընթըլում են: Բայց ի՞նչու բարեհաճիցիք այդպէս շուտ վերադառնալ:

ԿԱՏԵԱ. Զատ հասարակ պատճառաւ, որովհետեւ վաղը տօն է և ներկայացումը տեղի չունեցաւ:

ՍԱԹԵՆԻԿ. Ափսոս, ես ցանկանում էի տեսնել տյդ պիէսան:

ՍՈՒՐԵՆ. Այդ էլ իմ բախտիցն էր:

ԳՐԻԳՈՐ. (Ներսից): Ի՞նչու այդպէս շուտ վերադառձաք:

ԿԱՏԵԱ. Հայրիկ, ներկայացումը չը կայացաւ:

ԳՐԻԳՈՐ. Եկեք, ընթըլիքը քանի տաք է:

(Գնում են, Սաթենիկը, Կատեան և Սուրէնը: Աղախինը ծածկում է պատուհանը, զռները և մեղմիկ հանգնում է լամպան):

ՎԱՐԱԳՈՅՔ

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ:

Նոյն դահլիճը առաւօս է:

8ԵՍՏԻ. 1

Ծառան մենակ

ԾԱՌԱՅ. (Մաքրում է սեղանը, աթոռնենը և այլն)... Փոխւել է այս տան պատկերը:

8ԵՍՏԻ. 2

ՄՏԱՆՈՒՄ Է ԱԴԱԽԻՆը:

ԱԴԱԽԻՆ. Տիկինը ասում է գնայ բազար: (Ծառան գնում է: Աղախինը մաքրում է սեղանը, աթոռները և այլն) . . .

(Մտնում են Գրիգորը, Սաթենիկը, և քիչ յետոյ Սուրէնը զրեերը ծեռքին: Պառակաց յետոյ):

ԳՐԻԳՈՐ. Այս գիշեր շնուր է եկել Աղէքսանդրը: ՍԱԹԵՆԻԿ. Առաւօտն է եկել:

ԳՐԻԳՈՐ. Քննմծ է: (Աղախինը գնում է):

ՍԱԹԵՆԻԿ. Այն:

ԳՐԻԳՈՐ. (Սուրէնին): Ասա տեսուչին այսօք կը գամ մօար:

ՍՈՒՐԵՆ. Զատ լաւ: (Գնում է):

ԳՐԻԳՈՐ. (Վեր կենալով): Եթէ Յակոբեանը եկաւ, թող սպասի ինձ: (Հագնում է վերի զգեստը և գնում):

ՍԱԹԵՆԻԿ. Լաւ հայրիկ: (Գրքակալից վերցնում է մի գերք և սկսըում է թերթել. քիչ յետոյ մտնում է Կատեան):

8ԵՍՏԻ. 3

ԿԱՏԵԱ. Ի՞նչ էք կարդում, «Բելանա ըաբինեան»:

ՍԱԹԵՆԻԿ. Այն, շատ հետաքրքիր բան է:

ԿՈՏԵՍԱ. Ես կարդացել եմ:

ՍԱԹԵՆԻԿ. Հեղինակը կի՞նէ:

ԿՈՏԵՍԱ. Այն:

ՍԱԹԵՆԻԿ. Որքան դժբախտ աղջիկ է եղել:

ՏԵՍԻԼ. 4

ՄՏԱՆՈՒՄ Է ԱԴԱԽԻԱՀՅ:

ԱԴԱԽԻՆ. (Կատեռային): Օրիորդ, տիկինը ձեզ կանչում է: (Գնում են աղախինը և Կատեռան: Պառողայից յետու մտնում է Պետրոսը):

ՏԵՍԻԼ. 5

ՊԵՏՐՈՍ. Բարեւ տիկին Սաթենիկ. խանգարեցի,
կարդում էք:

ՍԱԹԵՆԻԿ. Ոչի՞նչ: (Գիրքը դնում է սեղանի վրայ):
Ինչպէս էք պ. Պետրոս,

ՊԵՏՐՈՍ. Ճնորհակալ եմ: Ելեկ թաղանումն էիք:

ՍԱԹԵՆԻԿ. Այն, բայց յետաձգւեց:

ՊԵՏՐՈՍ. Այսօր ներկայացնում են «Կեանքի արժէքը»:

ՍԱԹԵՆԻԿ. Գնալու էք:

ՊԵՏՐՈՍ. Կուզէի գնալ, բայց ժամանակ չկայ:
իսկ դուք:

ՍԱԹԵՆԻԿ. Ոչ:

ՊԵՏՐՈՍ. Բայց որտեղ է օր. Կատեռան:

ՍԱԹԵՆԻԿ. Նա երեխ օգնում է մայրիկին, շուտով
կը գայ, ի՞նչ նորութիւն ունիք:

ՊԵՏՐՈՍ. Սոսկալի նորութիւն:

ՍԱԹԵՆԻԿ. (Զարժացած), Ի՞նչ է պատահել:

ՊԵՏՐՈՍ. Մեր հարեւանի աղջիկը այս գիշեր թռւաւ-
որել է լրան:

ՍԱԹԵՆԻԿ. ՄԵռել է:

ՊԵՏՐՈՍ. Այն, բժիշկը ուշ հասաւ:

ՍԱԹԵՆԻԿ. Յայտնի չէ թէ ինչ պատճառով:

ՊԵՏՐՈՍ. Մասամբ յայտնի է:

ՍԱԹԵՆԻԿ. Խեղճ:

ՊԵՏՐՈՍ. Այն, նա շատ դժբախտ աղջիկ էր:

ՍԱԹԵՆԻԿ. Դուք լաւ էիք ճանաչում նրան:

ՊԵՏՐՈՍ. Այն, ընկեր էի: Տիկին Սաթենիկ, գիտեմ
որ դուք շափաղանց բարի էք, ինդըստ եմ լսեցէք ինձ մի
քանի բոպէ:

ՍԱԹԵՆԻԿ. Խնդրեմ, խնդրեմ:

ՊԵՏՐՈՍ. Հանգուցեալը բացի մի նամակից թողել է
և երկրորդը, որը ուղղած է իմ հասցէին. բովանդակու-
թինը յայտնի է միայն ինձ. ահա նա, կարդացէք:
(Տալիս է նամակը: Սաթենիկը կարգում է լուռ):

ՍԱԹԵՆԻԿ. (Զարժացած): Իմ ամուսինը:

ՊԵՏՐՈՍ. Ի՞նչպէս տհմնում էք:

ՍԱԹԵՆԻԿ. Ուրեմն նա ստոր մարդ է:

ՊԵՏՐՈՍ. Աւելի քան կարծում էք:

ՍԱԹԵՆԻԿ. Դուք ի՞նչ էք ուզում անել:

ՊԵՏՐՈՍ. Զը գիտեմ:

ՍԱԹԵՆԻԿ. Դուք սիրում էիք նրան:

ՊԵՏՐՈՍ. Ես յարգում էի նրան:

ՍԱԹԵՆԻԿ. Գեղեցիկ էք:

ՊԵՏՐՈՍ. Նմանը դժւար գտնւեր:

ՍԱԹԵՆԻԿ. Եւ իմ ամուսինը . . .
 ՊԵՏՐՈՍ. Այն, ձեր ամուսինը:
 ՍԱԹԵՆԻԿ. Ճնողներ ունի նրայ:
 ՊԵՏՐՈՍ. Այն, ոնի, ծեր հայր և պատաւ մայր:
 ՍՍԱԹԵՆԻԿ. Ուրիշ:
 ՊԵՏՐՈՍ. Ուրիշ ոչ ոք:
 ՍԱԹԵՆԻԿ. Հարուստ են:
 ՊԵՏՐՈՍ. Ոչ, նրանք շատ չբաւոր են:
 ՍԱԹԵՆԻԿ. Բայց լինչով են ապրում:
 ՊԵՏՐՈՍ. Հանգուցեալն էր պահում տունը իր աշխատանքով:

ՏԵՍԻ 6

ՄՏԱԿԱՆ Է ԿԱՏԵԱԱ.

ԿԱՏԵԱ. (Բարեւում է): Խնչպէս էք պլ. Պետրոս:
 ՊԵՏՐՈՍ. Ճնողհակալ եմ, բայց դուք ինչպէս էք:
 ԿԱՏԵԱ. Խնչպէս տեսնում էք, Մեղ մօտ չք գալիս.
 Մոռացել էք մեզ:
 ՊԵՏՐՈՍ. Խնչպէս տեսնում էք, ես այստեղ եմ:

ՏԵՍԻ 7

ՄՏԱԿԱՆ Է ՅԱԼՈՐԵԱԱՅ:

(Բարեւում է Սամենիկին, Կատեային և ծանոթանում է Պետրոսի հետ):
 ՊԵՏՐՈՍ. (Սամենիկին): Մնաք բարով: (Ուզում է գնալ):
 ՍԱԹԵՆԻԿ. Դուք գնում էք:
 ՊԵՏՐՈՍ. Այն, ես կը գամ յետոյ:
 ԿԱՏԵԱ. Պետրոս մնացէք:
 ՅԱԿՈԲԵԱ. Պարոնայք, գուցէ ես խանգարեցի ձեզ:

ՍԱԹԵՆԻԿ. Ոչ, պլ. Յակոբեան:
 ՊԵՏՐՈՍ. (Կատեային): Գուք . . .
 ԿԱՏԵԱ. Այն, ես . . .
 ՅԱԿՈԲԵԱ. Բայց պատեղ է Գյուկոր Գասպարիշը:
 ՍԱԹԵՆԻԿ. Նա չուտով կը դայ, պատւիրեց սպասել: (Սամենիկը և Յակոբեանը խօսում են միմեանց հետ):
 ԿԱՏԵԱ. Դուք անդործ էք դաբձեալ:
 ՊԵՏՐՈՍ. Այն:
 ԿԱՏԵԱ. Միթէ գործ չ'կայ:
 ՊԵՏՐՈՍ. Գործ կայ, բայց շատ խաղէյններ չեն վերցնում ինձ:
 ԿԱՏԵԱ. Ի՞նչու:
 ՊԵՏՐՈՍ. Զը գիտեմ. Երեկ իբրև անվստահելի անձնաւորութեան:
 ԿԱՏԵԱ. Բայց որքան վատ են գործարանատէրերը:
 ՊԵՏՐՈՍ. Զէ որ ձեր հայրն էլ նոյն գասակարգի է պատկանում:
 ԿԱՏԵԱ. Այդ միկնոյն է:

ՏԵՍԻ 8

ՄՏԱԿԱՆ Է ՀՈՒԿԱԽԻՄԵԱ:

ՀՈՒԿԱԽԻՄԵ. (Բարեւում է Յակոբեանին և Պետրոսին): Խնչպէս էք պարոնայք; Կատեա, սուրճ բեր: (Կատեան գնում է քիչ յետոյ բերում երկու բաժակ սուրճ): Խնչ նորութիւններ կան պլ. Յակոբեան:

ՅԱԿՈԲԵԱ. Զեր աղջութիւնը տիկին. (Միկնոյն ժամանակ Սամենիկը և Պետրոսը միմեանց հետ խօսում են):

ՀՈՒԿԱԽԻՄԵ. Սուրճ անուշ արէք պարոնայք: (Նստում են սեղանի մօտ):

ՅԱԿՈԲԵԱՆ. Զը գիտէք Դրիդոս Գասպարիչը ուր է գնացել:

ՀՐԻՓՍԻՄԷ. Դիմնաղիայ գնաց, տեսուչը կանչել էր:
ՅԱԿՈԲԵԱՆ. Ի՞նչ է Սուրբնի վարքը լաւ չէ:
ԿԱՏԵԸ. Շատ ծով է, պ. Յակոբեան.

ՀՐԻՓՍԻՄԷ. Կատեա . . . Պ. Պետրոս դուք շատ տխուր էք:

ՊԵՏՐՈՍ. Ի՞նչ անել, երեի կեանքն է ստիպում տխուր լինել, ուրիշ կերպ անկարելի է տպել:

ՏԵՍԻ 9

ՄՏԱԿԱՆ է Աղեքսանդրը:

ԱՂԵՔՍԱՆԴՐ. Ադուք այստեղ էք պ. Պետրոս. շատ ուրախ եմ (Չեռ է տալիս): Դուք նայնպէս. երեի նոր ծրագիր ունիք:

ՅԱԿՈԲԵԱՆ. Միալում էք:

ՍՍԹԵՆԻԿ. Աղեքսանդր . . .

ԱՂԵՔՍԱՆԴՐ. Գուցէ, բայց չեմ կարծում, որ սիալւած լինեմ:

ՀՐԻՓՍԻՄԷ. Բաւական է Աղեքսանդր:

ԱՂԵՔՍԱՆԴՐ. Ի՞նչպէս էք պ. Պետրոս, մեր տուն չէք գալիս: Ի՞նչ նորութիններ ունեք:

ՊԵՏՐՈՍ. Հարեանիս աղջիկը ինքնասպանութին է գործել:

ԱՂԵՔՍԱՆԴՐ. Ինքնասպանութիւն: (Միհնոյն ժամանակ Սամենիկը նայումէ Աղեքսանդրի զէմբին):

ՍՍԹԵՆԻԿ. Ի՞նչ պատճեց քեզ Աղեքսանդր:

ԱՂԵՔՍԱՆԴՐ. Ոչինչ, գլուխս քիչ ցաւում է:

ՊԵՏՐՈՍ. (Մօտենալով Սամենիկին ցածր ձայնով): Դիո. Ժամանակ կայ աշխատեցէք ոչինչ չասել:

ՍՍԹԵՆԻԿ. Ճատ լաւ,

ԱՂԵՔՍԱՆԴՐ. (Յակոբեանին) Ի՞նչ են անում մեր բանւորները:

ՅԱԿՈԲԵԱՆ. Ճաշ են պատրաստել:

(Միհնոյն ժամանակ Սամենիկը, Կատեան և Պետրոսը միմիկանց նետ խօսում են):

ԱՂԵՔՍԱՆԴՐ. Ճաշ:

ՅԱԿՈԲԵԱՆ. Այն: (Հոփսիմէն գնում է):

ԱՂԵՔՍԱՆԴՐ. Ում համար:

ՅԱԿՈԲԵԱՆ. Երեի տիրոջ համար:

ԱՂԵՔՍԱՆԴՐ. Բանւորները ուզում են գործադուլ անել այն, և դուք ուզախ էք, այնպէս չէ:

ՅԱԿՈԲԵԱՆ. Անքան էլ տխուր չեմ:

ԱՂԵՔՍԱՆԴՐ. Դուք մեր տունը քանդում էք:

ՅԱԿՈԲԵԱՆ. Միալում էք:

ԱՂԵՔՍԱՆԴՐ. Մեր շահերը պաշտպանելու փոխարէն, դուք բանւորների շահերն էք պաշտպանում:

ՅԱԿՈԲԵԱՆ. Ես պաշտպանում եմ արդարութիւնը,

ՏԵՍԻ 10

ՄՏԱԿԱՆ է Գրիգորը:

ԴՐԻԳՈՐ. (Յակոբեանին): Ի՞նչ նորութիւններ կան:

ԱՂԵՔՍԱՆԴՐ. Բանւորների պահանջն է քերել:

ԴՐԻԳՈՐ. Թոյլ տուր ինձ իմանալ:

ՅԱԿՈԲԵԱՆ. (Թուղթը տալուվ): Ներեցէք Գրիգոր

Դասպարիշ, որ ուշ եմ ներկայացնում ձեղ, երեկ չը կարողացայ բերել: Երեք օր ժամանակ է տւած: Վաղը կիւրակի է: (Գրիգորը նայում է Թուղթը):

Ա.ՂԵՔՍԱՆԴՐ. Նըանք ոչինչ էլ չեն ստանալ:

ԳՐԻԳՈՐ. Այդ քո գործը չէ:

Ա.ՂԵՔՍԱՆԴՐ. Ես իրեւ ձեր որդին իրաւունք ունիմ մեր մասին մտածելու:

ԳՐԻԳՈՐ. Դու միայն մտածում ես, որ շատ փող ստանաս և կլուք վազես:

Ա.ՂԵՔՍԱՆԴՐ. Գուք սատանայ էք:

ԳՐԻԳՈՐ. (Չարանալով): Իմ տան մէջ չը վիրաւորել իմ կառավարիչին:

Ա.ՂԵՔՍԱՆԴՐ. Նա քո տունը քանդում է:

ՅԱԿՈԲԵԱՆ. Դուք ձեր ասածը չէք հասկանում պ. Աղեքսանդր: Ես ձեզ ներում եմ:

Ա.ՂԵՔՍԱՆԴՐ. Անդգամ: (Ֆնում է միւս սենեակը):

ԳՐԻԳՈՐ. Ներիր նրան պ. Յակոբեան, ինքդ խելագար հաշւեցիր, էլ աւել ինչ կարելի է նրանից պահանջել:

Ա.ԹԵՎԵԼԻԿ. Ներեցէք պ. Յակոբեան. Ես ինքս նրա փոխարէն ամաչում եմ:

ՅԱԿՈԲԵԱՆ. Դուք ափսոս էք: (Մաթենիկը գնում է):

ԳՐԻԳՈՐ. Յայտնեցէք բանւորներին, որ ես ցանկանում եմ իրանց հետ խօսել, թող ընդունեն իրանց ներկայացուցիչը և վաղը ուղարկեն ինձ մոտ:

ՅԱԿՈԲԵԱՆ. Ժամը քանիսին էք հրամացում:

ԳՐԻԳՈՐ. Ինչպէս իրանց յարմար կլինի: Մնացէք կը ճաշենի:

ՅԱԿՈԲԵԱՆ. Ջնորհակալութիւն. պիտի շտապեմ գործարան: Մնաք բարով: (Ֆնում է):

ԿԱՏԵԱՆ. Հայրիկ, ի՞նչ էք ուղում անել:

ԳՐԻԳՈՐ. Կամենում եմ բաւարարութիւն տալ նրանց պահանջին:

ԿԱՏԵԱՆ. Հայրիկ, որքան բարի էք դուք,

ՊԵՏՐՈՍ. Դուք բոլորովին նման չէք միւսներին պ. Մակարեան:

ԳՐԻԳՈՐ. Ես կամենում եմ օրինակ տալ ամենքին, որ բանւորը նոյնպէս մարդ է և ապել է ուղում:

ՏԵՍԻԼ 11

ՄՏԱԿՆ Է ՄԻԱՅԱՐ:

(Բարեւում է, Գրիգորին ծեռ է տալիս և յետոյ Կատեային):

ԿԱՏԵԱՆ. Դուք ծանօթ չէք: Եանօթացէք:

ՄԻՆԱՆ. (Ձեռ տալով): Եատ ուրախ եմ: (Գրիգորին): Գնացիք գիմնազիայ:

ԳՐԻԳՈՐ. Այս: Երեք օր է անպիտանը գիմնազիայ չի գնացել:

ՄԻՆԱՆ. Մի խումբ աշակերտներ միշտ ժողովում են իրանց մի ընկերի մօտ և թուղթ խաղում, երկի Սուրբնէլ նրանց թւումն է:

ԳՐԻԳՈՐ. Ամեն բան սպասելի է:

ՄԻՆԱՆ. Ի՞նչ ասաց տեսուչը:

ԳՐԻԳՈՐ. Զատ խնդրեցի, որ ներեն. մտադիր են եղել նրան վանդել

ՄԻՆԱՆ. Խոզ է, խոզ:

ՏԵՍԻԼ. 12

ՄՏԱԿԱՆԻ Ե ՍԱՐԵԱՀԻԿԸ:

(Բարեւում է Մինասին:)

ՍԱԹԵՆԻԿ. Ի՞նչպէս էք քեռի:

ՄԻՆԱՍ. Զեր ողջութինը, ի՞նչ է, պարոնը տանն է:

ՍԱԹԵՆԻԿ. Այս, նա իր սենեակում խելագարի դեր է խաղում:

ՊԵՏՐՈՍ: Խիզճը անմաքուր է և նա դեռ շատ պետք է տանջնի:

ՄԻՆԱՍ. Ի՞նչ է պատահել:

ՍԱԹԵՆԻԿ. Զը զիտեմ, կարծէս պատերի հետ խօսում է:

ԿԱՅՏԵԱ. Ես արդէն սկսում եմ հասկանալ, որ դուք կարեւոր բանի համար էք եկել այսօք մեր տան:

ՊԵՏՐՈՍ. Այս, օրիսորդ: Դուք շուտով կիմանաք:

ԳՐԻԳՈՐ. Սաթենիկ. Ինչ նոր բան զիտես Աղէք-սանդրի մասին, ինձ թւում է, որ դուք ինձնից մի բան թագնում էք:

ՍԱԹԵՆԻԿ. Զեր որպին ոճրագործ է:

ԳՐԻԳՈՐ. (Զարմացած): Ոճրագն թծ . . .

ՍԱԹԵՆԻԿ. Այս: (տալով նամակը): Կարդացէք:

ԳՐԻԳՈՐ. (Կարդում է լուր և բիշ յետոյ կանչում Աղէքսանդրին): Աղէքսանդր:

ՏԵՍԻԼ. 13

ՄՏԱԿԱՆԻ Ե ԱՂԵԺԱԱՆԴՐԸ:

ԱՂԵՔՍԱՆԴՐ. Ի՞նչ էք ասում: (Մինոյն ժամանակ Սաթենիկը նամակը Գրիգորից արնում և տալիս է Պետրոսին): Ասացէք ի՞նչ է պատահել:

ԳՐԻԳՈՐ. Պատասխանիր, հայլասպան որդի, ինչ ոճրագործութիւն ես գործել:

ԱՂԵՔՍԱՆԴՐ. Ես չեմ հասկանում ինչ էք ասում:

ՄԻՆԱՍ. (Սաթենիկին): Միթէ ժամանակն էք բացել պաղանիքներ:

ՍԱԹԵՆԻԿ. Այս. Վերջապէս պարզում է ամեն ինչ:

ԳՐԻԳՈՐ. Դու անպատել ես մի չքաւոր աղջկայ կուսութինը:

ԿԱՅՏԵԱ. Ասուած իմ:

ԱՂԵՔՍԱՆԴՐ. Սուտ է:

ՍԱԹԵՆԻԿ. Սուտ չէ:

ԱՂԵՔՍԱՆԴՐ. Ուրեմն դու էլ ես զինած իմ դէմ:

ՍԱԹԵՆԻԿ. Այս, ես էլ:

ԱՂԵՔՍԱՆԴՐ. Դուք էլ պ. քեռի:

ՄԻՆԱՍ. Ես դեռ չեմ հասկանում ինչումն է ամբողջ դրամայի բովանդակութիւնը

ԱՂԵՔՍԱՆԴՐ. Իսկ դուք պ. Պետրոս: 2ըլինի թէ դուք էք . . .

ՊԵՏՐՈՍ. Այս, ես եկել եմ հաշիւ պահանջելու:

ԱՂԵՔՍԱՆԴՐ. Հաշիւ . . .

ՊԵՏՐՈՍ. Այս:

ԱՂԵՔՍԱՆԴՐ. Դուք փաստ շունէք:

ՊԵՏՐՈՍ. (Նամակը ցոյց տալով) Ահա նա:

ԳՐԻԳՈՐ. Խայտառակ արիր իմ անունը, ամբողջ գերդաստանի պատիւը:

ԱՂԵՔՍԱՆԴՐ. Նա սուտ է խօսում: Վայրենի:

ՊԵՏՐՈՍ. (բարձր): Լոեցէք պարոն, դուք ձեղ չափա-
քանց թոյլ էք տալիս:

ԱՂԵՔՍԱՆԴՐ. (Հանելով ատրճանակը գրպանից): Լոիր
սրիկայ: (հսկոյն կատեան մէջտեղ է ընկնում):

ԿՈՏԵՍ. Աղէքսանդր . . .

ՏԵՍԻԼ 14

ՄՏԱԿԱՄ Է ՀՈՒԽՍԻՄԵԱ:

ՀՈՒԽՍԻՄԵԱ. Այս ի՞նչ բան է:

ԿՈՏԵՍ. Մայրիկ, Աղէքսանդրը . . . (Պառւզալից յետոյ):
ՊԵՏՐՈՍ. Օրիորդի դիակը խոնաւ սենեակի մէջ է.
Նրա պառաւ մայրը և ծեր հայրը լիկները ծռած, սպասում
են Սստուծոյ օգնութեան: Խախտել էք անմեղի կոյսութինը,
ամենասուրբը, որ աղջկայ համարէ: Գնացէք լաց եղէք
նրա դիակի առաջ, ասացէք ամենքին, որ ձեր զոհ նէ և
դուք էք ոճրագործը: Մաքրեցէք ձեր գերգաստանի պա-
տիւը: Ճանաշում եմ ձեզ, դուք թղթախաղի լուսալիստներդ
ոռվորութիւն ունէք միշտ պատրաստ պահել ձեր ատրճա-
նակները, որպէսզի դժւար բռպէն գալու ժամանակ վերջ
տաք ձեր կեանքին, բայց դուք վախկոտ էք, դուք
կամենում էիք սպանել թոյլերի բարեկամին, բայց այդ ձեզ
չը յաջողւեց: Ինչպէս քաջ էք շքեղ դահլիճում:
Ասացէք. միթէ դուք փողով քիչ հոգիներ էք գնում, որ և
հերթը հասաւ մի կոյս աղջկայ: Միթէ չը գիտէք, որ
մեռէալները բողոքում են երբ իրանց մօտ թաղում են մի
մեղաւորին: Գնացէք կուելու հողի դէմ, որ նա տեղ աայ
ձեր զոհին:

ԱՂԵՔՍԱՆԴՐ. Ես չը գիտեմ ինչ անել,

ՊԵՏՐՈՍ. Ոճրագործը միշտ դժւարանում է երբ
նրան դատապարտում են որեէ բանում: (Կատեային): Դուք
ինձ նորից կեանք տւիք, ես ձեզ մինչեւ մահս պարտական եմ:

ԳՐԻԳՈՐ. (Աղէքսանդրին): Գնայ, գնայ շոքիր և նե-
րում խնդրիր.

ԱՂԵՔՍԱՆԴՐ. Ես հպարտ եմ, ես ինձ շեմ ստորաց-
նիլ նըանց առաջ:

ՍՍԹԵՆԻԿ. Դու պարտաւոր ես, որովհետեւ ստոր
մարդ ես

ՀՈՒԽՍԻՄԵԱ, ի՞նչ ես արել դու որդի:

ԳՐԻԳՈՐ. Պառաւ, միթէ մենք մեղաւոր ենք, որ մեր
որդին ոճրագործ է:

(Հաւում է եկեղեցու զանգերի ծանր դողանջիւնը):

ՊԵՏՐՈՍ. Լսում էք: (Աղէքսանդրին): Զեղ կանչում են:
(Ամնարը զլուկները կախում են):

Կ Ա Ռ Ա Գ Ո Յ Ռ



ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Նոյն դահլիճը. միւս օրը:

ՏԵՍԻԼ 1.

Սամենիկը մենակ նպտած է բազմոցի վրա՝ խորասուզած մտած-
մունքների մէջ, քիչ լեռոյ մտնում է Կատեան:

ԿԱՏԵԱ. Դուք դարձեալ մտածում էք:

ՍԱԹԵՆԻԿ. Ես տանջւում եմ Կատեա:

ԿԱՏԵԱ. Ես հասկանում եմ, բայց մոռացութեան
տւեք, արդէն ուշ է. Աղէքսանդրի մէջ ամեն բան մեռէլ է:

ՍԱԹԵՆԻԿ. Ես երբէք չեմ կարող մոռանալ Պետրոսի
խօսքերը, զեռ այժմս էլ հնչում է ականջներիս մէջ նրա
ձայնը. Որքան ստոր է Աղէքսանդրը:

ԿԱՏԵԱ. Հայրիկը հարիւք բուրլի տւառ Պետրոսին,
օրիորդի թաղման համար, բայց Պետրոսը մերժեց:

ՍԱԹԵՆԻԿ. Նա իբաւունք ունէք մերժելու:

ԿԱՏԵԱ. Այսօր երեի կը թաղեն նրան:

ՍԱԹԵՆԻԿ. Պետրոսը ասաց կը գամ միասին եկեղեցի կը գնանք. երեի շուտով կը գայ. արդէն ժամը տասն
է: Դու չես գալու:

ԿԱՏԵԱ. 2ը գիտեմ:

ՏԵՍԻԼ. 2.

Մտնում է աղախինը:

Ա.Պ.ԱԽԻՆ. Պետրոսը:

ՍԱԹԵՆԻԿ. Խնդիրը: (Աղախինը զնում է):

ՏԵՍԻԼ. 3

Մտնում է Պետրոսը:

ՊԵՏՐՈՍ. Բարկ ձեզ: Դուք արդէն պատրաստ էք: (Կատեային): Դուք չէք գալու:

ԿԱՏԵԱ. Զը գիտեմ:

ՍԱԹԵՆԻԿ. Մի քանի բռպէ առաջ մինք ձեր մասին էինք խօսում:

ՊԵՏՐՈՍ. Ձեր ամուսինը երկի ինձ ասում է:

ԿԱՏԵԱ. Ուշադրութիւն մի դարձնէք նրա արած բաները բռլուսին արդէն յայտնի է:

ՊԵՏՐՈՍ. Նա ձեր եղայլն է, իսկ ձեր ամուսինը: Մրգան անարդարացի է այդ:

ՍԱԹԵՆԻԿ. (Գնալով): Ներեցէք պ. Պետրոս, ես իսկոյն: (Գնում է):

ՊԵՏՐՈՍ. (Փոքք պառւզայից լետոյ): Ես ուզում էի խօսում չը կատարել:

ԿԱՏԵԱ. Ի՞նչու:

ՊԵՏՐՈՍ. Որովհետեւ, ինձ այսուհետ ատում են, երեկուանից յետոյ:

ԿԱՏԵԱ. Ա՞լ:

ՊԵՏՐՈՍ. Ի՞նչու դուք այդպէս միս քաշեցիք:

ԿԱՏԵԱ. Ներեցէք պ. Պետրոս. Ես չէի ուզում ասել, բայց այժմ անկարող եմ թագանել: Այն, ձեզ այսուհետ ատում են, բայց կայ մէկը, որ սիրում է ձեզ:

ՊԵՏՐՈՍ. Դուք ծիծաղում էք ինձ վրայ:

ԿԱՏԵԱ. Ոչ, ես չեմ ծիծաղում:

ՊԵՏՐՈՍ. Թողնենք. մեզ կարող են լսել:

ՏԵՍԻԼ. 4.

Մտնում է Սաթենիկը:

ՍԱԹԵՆԻԿ. Ժամանակն է չէ պ. Պետրոս:

ՊԵՏՐՈՍ. Այն: (Կատեային): Գնանք օր. Կատեա:

ԿԱՏԵԱ. Ուրախութեամբ: (Գնում է և քիչ յետոյ գալիս):

ՊԵՏՐՈՍ. (Սաթենիկին) Դուք տանջում էք:

ՍԱԹԵՆԻԿ. Ես:

ՊԵՏՐՈՍ. Այն, ինձ թւում է, որ դուք միշտ լաց էք լինում, բայց գիտեք լաց լինելը լաւ է, մանաւանդ ձեզ համար:

ՍԱԹԵՆԻԿ. Ես ձեզ չեմ հասկանում:

ԿԱՏԵԱ. (Ներս մտնելով): Գնանք պարոնայք: (Գնում էն):

ՏԵՍԻԼ. 5

Մտնում է ծառան:

ԾԱՌԱՅ. (Մաքրում է սեղանը զրքակալը և այլն): Այս տանը ծիծաղ չկայ . . բայց կար ժամանակ, օ ինչպիսի ժամանակ էք. ոսկի ժամանակ էք: Հիւրերը անպակաս, այժմ՝ ոչ ոք չի գալիս: (Նստում է): Օրիորդ Կատեան խնդրեց, որ օրհնեմ նրան: „Ճեր ես ասում է քո աղօթքները Ասաւած կը լսի“: Է՛...

ՏԵՍԻԼ. 6

Մտնում է Աղէքսանդրը:

Ա.Ղ.Ք.Ք.Ս.Ն.Դ.Բ. Ո՞չ ոք չկայ տանը:

ԾԱՌԱՅ. Տիկինը տանն է:

ՀՈՒՓՍԻՄԵ. Դու կը լաւանաս, բոլորն էլ քեզ կը սիրեն, կը յարգեն:

Ա.Ղ.Ք.Բ.Ս.Ն.Դ.Ր. Եկեղեցի գնացին:

Ա.Ղ.Ք.Բ.Ս.Ն.Դ.Ր. Եկեղեցի:

ԾԱ.Ո.Ա.Յ. Օր. Կատեան ասաց ինչ որ աղջիկ իրան սպանել է...

Ա.Ղ.Ք.Բ.Ս.Ն.Դ.Ր. Լաւ, գնա բանիդ: (Ծառան գնում է): Նա իմ զոհն է: Զէ որ ես նրան ստիպեցի: Նրան այսօր թաղում են, և կինս գնացել է նրա թաղման հանդիսին: Որքան ստոր եմ ես, որքան անխիղճ: Երկու օր առաջ նա կենդանի էր, բայց այսօր, այսօր նա դրած է դագաղում: Որքան սոսկալի է, որքան սարսափելի: Նա աղջում էր, ինդրում, լաց եղաւ, բայց ես... ես ստիպեցի նրան, ես շը ինայեցի: Որքան անպիտան եմ ես:

ՏԵՍԻԼ 7

Մտնում է Հոփիսիսէն:

ՀՈՒՓՍԻՄԵ. Ո՞րտեղ էիր որդի ամբողջ գիշերը:

Ա.Ղ.Ք.Բ.Ս.Ն.Դ.Ր. Թող Աստուած սիրես: «Որտեղ էիր» երեխայ եմ ինչ է, որ հարցնում ես «որտեղ էիր»:

ՀՈՒՓՍԻՄԵ. Ես քո մայրն եմ, ինչու ես չարանում: 2է որ Սաթենիկը մենակ է մնում:

Ա.Ղ.Ք.Բ.Ս.Ն.Դ.Ր. Միթէ դուք նրա մօտ չէք:

ՀՈՒՓՍԻՄԵ. Որդի, ինչու է կորել քո խիղճը, չէ որ նա քո կինն է:

Ա.Ղ.Ք.Բ.Ս.Ն.Դ.Ր. Մայր, ես ինքս ուզում եմ մաքուր խիղճ ունենալ, բայց չեմ կարողանում: Ես չը գիտեմ ինչ անել:

ՀՈՒՓՍԻՄԵ. Գիշերները մնացիր տանը, կամ թատրոն գնայ, վեցըրու Սաթենիկին, Կատեալին, նրանից յետոյ կը սկսես մոռանալ քո վատ ընկերներիդ:

Ա.Ղ.Ք.Բ.Ս.Ն.Դ.Ր. Երանի եթէ ընկերներ ունենալի, ես բոլորովին միայնակ եմ:

Մտնում են Գրիգորը և ծառան:

Գ.Բ.Ի.Գ.Ո.Ր. Աղէքսանդրը եկել է:

ԾԱ.Ո.Ա.Յ. Այն, նոր եկաւ:

Գ.Բ.Ի.Գ.Ո.Ր. Հորփաց էր:

ԾԱ.Ո.Ա.Յ. Ոչ, Գրիգոր ֆասպարիչ:

Գ.Բ.Ի.Գ.Ո.Ր. Լաւ նկատեցիր:

ԾԱ.Ո.Ա.Յ. Այն, մինչև անգամ խօսեցի հետը, բայց բերանից հոտ չէր փչում:

Գ.Բ.Ի.Գ.Ո.Ր. Լաւ, գնայ բանիդ: (Ծառան գնում է): Կարծես ամբողջ հասարակութիւնը ինձ վրայ է ծիծաղում, կարծես մարդիկ ինձ հրում՝ հեռացնում են իրանց միջից: Իմ որդին ոճլազործ է, ես մինչև մահս այդ չեմ մոռանալ: Աստուած իմ, ինչ էր ասում մի հասարակ բանւոր, իսկ իմ որդին, կշոռվ մի փող է նստել, բայց դարձել է միասուր մարդ, իսկ նա ովկ գիտէ ուղիղ գրել կարգալ չի սովորել:

ՏԵՍԻԼ 9

Մտնում է Մինար:

ՄԻՆԱՐ. (Չեոր տալով Գրիգորին): ՄԻՆԱՐ էք:

ԳՐԻԳՈՐ. Ես միշտ մենակ եմ:
 ՄԻՆԱՍ. Այսօր թաղում են այն դժբախտ աղջկան:
 ԳՐԻԳՈՐ. Լսում էի զանգերի զօդանջիւնը:
 ՄԻՆԱՍ. Ահազին բաղմութիւն կայ եկեղեցում:
 (Միևնոյն ժամանակ լսում է զանգերի ծանր զօդանջը):

ԳՐԻԳՈՐ. Եղամ պատարագը վերջանում է:

ՏԵՍԻԼ 10.

Մտնում է Հռիփսիմէն:

ՀՌԻՓՍԻՄԷ. Եկեք սուրճը պատրաստ է: (Գնում է):
 ԳՐԻԳՈՐ. Գնանք Մինաս, քոյրդ մեղ հիւրասիրում է
 սուրճով: (Գնում են: Պառագայից յետոյ մտնում է Աղքա-
 սանդրը):

ՏԵՍԻԼ 11.

Ա.Ղ.Ք.Բ.Ա.Ն.Դ.Ի. Զեմ կարողանում հանգստանալ: Որ-
 քան ծանը է ինձ համար կեանքը: Այն, այն, ես անիրա-
 մարդ եմ: Մարդիկ բոլորն էլ զինւած են իմ դէմ, իսկ ես
 ոչ մէկի հետ չեմ կարող կուել:

ՏԵՍԻԼ 12.

Մտնում է Հռիփսիմէն:

ՀՌԻՓՍԻՄԷ. Եկ սուրճ խմիր:
 Ա.Ղ.Ք.Բ.Ա.Ն.Դ.Ի. Թող ինձ հանգիստ, ես զիտեմ այն-
 տեղ է եղբայրդ: Թող բարկութիւնս չզբանի:

ՀՌԻՓՍԻՄԷ. Ի՞նչ է արել քեզ նա:

Ա.Ղ.Ք.Բ.Ա.Ն.Դ.Ի. Ա... բաւական է, թողէք ինձ հան-
 գիստ: (Հռիփսիմէն գնում է): Այն, այն, ես ստոր մարդ
 եմ, մարդիկ բոլորը ինձ ատում են: (Նայում է լուսամու-
 տով): Ճուտով նրան կը տանեն այնտեղ: Աստած իմ ինչ
 պատասխան պիտի տամ նրան ես այնտեղ: Միբար իմ հան-

գստացիր, ես այլևս քեզ չեմ դաւաճանիլ, ներիր ինձ իմ
 անցեալներ: Ա՛յս որքան ծանը է տանել խղճի դատավճիռը:
 (Ոտքի ծայն): Այստեղ են գալիս: Աւելի լաւ է հեռանալ,
 որպէսզի ոչ ոք ինձ չը տեսնի: (Գնում է շուտով):

ՏԵՍԻԼ 13.

Իուգէնը, Միքայէլը և ծառան:

ԾԱՌԱՅ. Համեցէք, նստէք:

ՄԻՔԱՅ. Մի անհապստանալ, ոչինչ:

ՈՌԻԲԵՆ. Խնդրում եմ ծերուկ յայտնել Գրիգոր
 Գասպարիչին, որ նրան սպասում ենք:

ԾԱՌԱՅ. Ես բոպէիս ասեմ: (Գնում է):

ՄԻՔԱՅ. Տես Ռաբէն ինչպէս է զարդարած այս
 դահլիճը:

ՈՌԻԲԵՆ. Ի՞նչու համար չը լինի. մենք աշխատում
 ենք, իսկ նրանք ծախսում են:

ՄԻՔԱՅ. Հետաքրքիր է իմանալ, ոմտեղ են այս
 տան մարդիկը:

ՈՌԻԲԵՆ. Սուրճի ժամանակ է, երեկ սեղանառանն են:

ՏԵՍԻԼ 14.

Գրիգորը և քիչ յետոյ Մինասը:

ԳՐԻԳՈՐ. (Ձեռ տալով): Ջատ ուրախ եմ պարոնայք,
 ես ձեղ սպասում էի: (Կանչելով): Անեա:

ՏԵՍԻԼ 15.

Աղախինը:

ԳՐԻԳՈՐ. Հիւրերի համար սուրճ բեր: (Աղախինը
 գնում է): Ձեղ ընդրել են չէ:

ՄԻՔԱՅԵԼ. Այս: (Պառզա: Աղախինը սուրձ է բերում):

ԳՐԻԳՈՐ. Խնդրեմ, համեցէք: (Խնդրում են: Պառզալից լուսող): Այժմ կարող ենք գործի մասին խօսել, եթէ որո՞ն համաձայնութեան չը գանք անշուշտ գործադուլ պիտի անեք չէ:

ՌՈՒԲԵՆ. Այս, Գրիգոր Գասպարիչ:

ԳՐԻԳՈՐ. Ճատ գեղեցիկ: Խնձ յայտնի է ձեր պահանջները, ես կարգացել եմ եւ իւրաքանչիւր կէտի վրայ երկար մտածել: Բայց գիտէք, պէտքէ ձեզ ասեմ, որ ձեր պահանջը չափազանց խիստ է: (Մտնում է Մինասը:) Գուցէ պարոնի ներկայութիւնը ձեզ խանգարի:

ՄԻՔԱՅԵԼ. Ամենեւին ոչ:

ԳՐԻԳՈՐ. Ուրէմն այսպէս:

ՌՈՒԲԵՆ. Մենք երեւի շենք հաշտուիլ:

ԳՐԻԳՈՐ. Համբերեցէք պարոն, մենք դեռ ոչինչ չենք խօսել:

ՄԻՔԱՅԵԼ. (Շուրէէնին): Թեթեամտութին մի անիլ, համբերիլ:

ԳՐԻԳՈՐ. Եթէ ես չուզենայի վարել բարեկամաբար, ամենեւին չէի ցանկանալ ձեզ հետ բանակցիւլ: Ես զիտեմ, ձեզ ընտրել է երկու հարիւր բանւոր եւ անշուշտ տած կլինի որոշ հրահանգ որից գուք իհարկ է իրաւունք չունիք շեղելու:

— **ՄԻՔԱՅԵԼ.** Այս: (Մինոյն ժամանակ աղախինը զալիս է և ունում բաժակները):

ԳՐԻԳՈՐ. Կամենում էք նորից նայենք, թէ ձեզ արդէն յայտնի է:

ՄԻՔԱՅԵԼ. Խնչպէս կամենաք:

ՌՈՒԲԵՆ. Աւելորդ է:

ԳՐԻԳՈՐ. Ուրեմն ...

ՄԻՔԱՅԵԼ. Գրիգոր Գասպարիչ, ես շատ երկար չեմ խօսել եւ չեմ էլ ցանկանում արդարացնել բանհորութեան: Մեղանից էլ շատերը, ձեղանից նոյնպէս, այնպէս են կարծում որ մենք իրար թշնամի ենք, բայց բոլորովին այսպէս չէ. գուցէ ես սխալում եմ, բայց համոզված եմ, որ այդ այդպէս է: Երբ դեռ, այսպէս ասած, աշխատանքը մանուկ էր և չէր ըմբանում իր հութիւնը, նա միշտ մերկ էր մենում, Կապիտալը խլում էր նրանից ամենասուրբը, խլում էր նրա վերջի շապիկը, ծեծում էր հայհոյում, բռնութիւններ գործ գնում նրա վրայ ստիպում էր ստրուկ լինել եւ միշտ զլում տալով խոնարիւլ կապիտալի իւրաքանչիւր քմահաճութեան: Մանուկը չափահաս է դառձել, բայց մինչեւ կուի հրաւիրելը նա վարւում է բարեկամաբար, խօսում է նրա հետ, ժամանակ է տալիս որպէսպի մտածի նա, անցնում է պայմանաւծ ժամը և եթէ տեսնում է կապիտալը ուշադրութիւն չէ գարձնում, այն ժամանակ աշխատանքը հրաւրում է կուի: Նա գիտակից կերպավ կուի է մզում իր հակարակորդի դէմ, մինչեւ որ հակարակորդը ստիպւած է մինում: Հաշտուել: Դուք պ. Մակարեան, գիտէք և ձեզ շատ լաւ յայտնի է, որ բանւորի ձեռքերը աշխատում են, նա քրտինք է թափում, կեանք է ստեղծում և շատերին կանանչ պարագէ է նկիրում, որպէսպի ազատ կարողանայ ապրել ծաղիների հիւթով: Տեսնում էք պատրաստում են պալատանման տներ, բայց արդեօք մէկի մէջ տեսնում էք մի բանւորի բնակվելիս: Դուք կը աւենէք ներքին հարկի խոնաւ պատերի մէջ բանւորի մատաղ սերունդին, որոնք քաշւած մի անկինում և իրանց զժբախտ կեանքն են ողբում: Դուք աեսնում էք ամեն մի անկինում՝ բանւորը վիզը ծռած նայում է մարդուն, մարզը անցնում է և առանց նկատելու հրում նրան: Պ. Մակարեան, մենք բանւորներս չենք պահանջում, որ գուք բանւոր դառնար, իսկ մենք տէր, ոչ, մենք ուզում ենք մեր աշխատանքի պատուներից օգտւել:

ԳՐԻԳՈՐ. Դուք հրաշալի հոէտօր էք:

ՄԻՔԱՅԵԼ. Դուք ծաղրում էք:

ԳՐԻԳՈՐ. Ես ասում եմ ձիշտն։ Պարոնայք դուք պահանջում էք, ութ ժամւայ աշխատանք, բայց չէ որ սա ինձնից կախւած չէ։ Ես ուրախութեամբ, բայց ...

ՌՈՒԲԵՆ. Գրիգոր Գասպարիչ կարծում եմ ձեղնից բարձր տէր չունիք։

ԳՐԻԳՈՐ. Հենց բանը դրանումն է, որ ինձնից բարձր կայ։

ՌՈՒԲԵՆ. Սա միայն տնտեսական պահանջ է։

ԳՐԻԳՈՐ. Եթէ կախւած լինի ինձնից, ես գուցէ համաճայնէի բաւարարութիւն տալ ձեզ որովհեան ինքս հասկանում եմ որ աշխատաւորներիտ աւելի շատ հանգիստ է հարկաւոր։

ՄԻՆԱՍ. Ներեցէք պարօնայք, ես կողմնակի մարդ եմ, բայց կուղէի իմանալ, ինչ բան կայ, ութ ժամւայ և ինը ժամւայ աշխատանքի մէջ։

ՄԻՔԱՅԵԼ. Ութ ժամւայ աշխատանքը բանւորների համար այն է, ինչ որ մեզրաճանճի համար ծաղիկների հիւթը։ Մենք սրանով աշխատում ենք անզործների թիւը պակսացնել։

ՄԻՆԱՍ. Դուք շուտով ոշիշացրէք այն մեքենաները, որոնք աւելացնում են անզործների թիւը։

ՌՈՒԲԵՆ. Կուել տէխնիկայի դէմ, մեր կարծիքով անհնարին է։

ՄԻՆԱՍ. Ես կարծում եմ եթէ իւրաքանչիւր գործ մարդու ձեռքով կատարի, աշխատաւով աւելի բախտաւոր կապրի։

ՄԻՔԱՅԵԼ. Այն եթէ ձրիակերներ չը լինեն։ Բայց մեր կոխու տեխնիկայի դէմ չէ։

ՏԵՍԻԼ 16.

Մանում են Սամենիկը և Կատեան։

ԳՐԻԳՈՐ. Պատարագը վերջացաւ։

ԿԱՏԵԱՆ. Այն։

ԳՐԻԳՈՐ. Մեր բանւորների ներկայացուցիչներն են, ծանօթացէք։

(Սամենիկը և Կատեան մօտենում են և բարեւու)։

ԿԱՏԵԱՆ. Հայրիկ, մեր ներկայութիւնը ձեզ չի խանգարիլ։

ԳՐԻԳՈՐ. Կարծում եմ որ ոչ իսկ ձեզ համար։

ՄԻՔԱՅԵԼ. Մենք շատ ուրախ կըլինենք։

(Սամենիկը և Կատեան գնում են միւս սենեակը և քիչ յետոյ գալիս են գլխարկները հանած)։

ԳՐԻԳՈՐ. Ես արդէն հաշվել եմ, եթէ փոքրիկ զիջում չը անեք, մօտ տասը հազարի շափ գործարանի ծախսը աւելանում է։

ՌՈՒԲԵՆ. Բայց չէ որ աշխատանքից յետոյ է այն ծախսը։ Ես կարծում եմ շատ ծանր չի լինիլ։ Միայն մնում է ստորագրել և այն ժամանակ գուք կորուս չէք ունենալ։

ԳՐԻԳՈՐ. Դուք կարծում էք շատ հեշտ է։

ՌՈՒԲԵՆ. Գրիգոր Գասպարիչ, եթէ կամենաք այն, շատ հեշտէ։ Ներեցէք, կարծէս մէկը ստիպում է ինձ, որ ես կօսեմ, բայց ինչ ասել, ընկերս արդէն բոլորը ասաց, իսկ ես կասեմ այն, որ մեզանից շատերը մօռանում են։ (Կանգնում է ոտի վրա)։

Զեր աղջիկը և ձեր հարսը երկի հետաքրքրում են, թէ ինչպէս կը վերջացնենք։ Դուցէ նրանց համար էլ ծանր է, եթէ մենք տանենք յաղթանակը, բայց այդ միենոյն է ինձ համար։

Դուք գործարանատէրերտ, միշտ աշխատում էք պակասացնել բանւորների օրավարձը և աւելացնել աշխատանքի ժամերը: Հարցնում եմ, ի՞նչի համար: Ես կը պատասխանեմ ի՞նչու համար՝ որպէսզի ձեր որդիքը և միւսները նոյնպէս, գնան իլուր և ուրիշ շատ տեղեր թուղթ խաղան և քէֆեր անեն: Ձեզ ի՞նչ օգուտ, որ բանւորները պիտի աշխատեն, իսկ ձեր որդին փշացնի նրանց գառն քրախնքը: Հազարաւոր բանւորների ձեռքերի աշխատանքը, ձեր դասակարգը ոչինչացնում են իւրաքանչիւր քայլափոխում, երբէմն շղթառում են անյայտի մի հայացքի վրայ ահազին թուղ սոկի: Երբէմն հարիւրներ է միսում մի փունջ ծաղիկի վրայ, որ նէշը պիտի տայ ի՞նչ որ գերասանուհուն, որի հետ նոյնիսկ ծանօթ էլ չի լինում: Բայց երբ մօտենում է նրան մի խեղճ, շքաւոր, իսկոյն գոռում է վրան և մինչև անգամ հայհոյում: Ասացէք ինդրեմ, ի՞նչ է տեմ. կամ ի՞նչ է տալիս ձեր որդին ձեղ: Ինձ քաջ յայտնի է, որ նա բացի վնասից ձեղ ուրիշ բան չի տալիս և դուք հայրերդ, միշտ ստիպւած էք լինում բաւարարութիւն տալ նրանց արած ծախսերին:

Դուք իրաւոնք ունիք ասելու, որ մեր պահանջը շափաղանց ծանը է, որովհետեւ մենք ձեր որդին չէնք, բայց արդեօք այդ ճիշտ է: Ո՞վ է ձեր որդին, նա, որը լիում է ձեր հանգստութիւնը, նա, որը սիրում է ձեր սոկին: Ձեր որդիքը մենք ննք՝ բանւորներս, որովհետեւ աշխատում ենք ձեղ համար: Իսկ նրանք, որոնք մեր աշխատանքով ստացած սովինները աչ ու ձախ են շպրտում, նրանք մեր թշնամիններն են: Գրիգոր Գասպարիշ մենք շենք պահանջում ձեղնից աւել կոպէկներ, մենք մեր աշխատանքն ենք պահանջում և ուզում ենք մարդավայէլ ապրել:

Մեզ աանջում ոչիշացնում են խոնաւ սենեակները, ներքնայարկը խելագարցնում և բժամտեցնում է մեր գլուխը: Այլևս անկարելի է ապրել, միայն միումէ է մեզ՝ կամ մեռնել կամ ապրել ինչպէս մարդ:

ԿԱՏԵՆ. (Լացէ լինում):

ԳՐԻԳՈՐ. Հանգստացիր աղջիկս:

ԿԱՏԵՆ. Հայրիկ, նա որքան արդարացի է խօսում:

ԳՐԻԳՈՐ. Աղջիկս, ես նրան ուշադրութեամբ լսեցի, նա իմ մէջ թելազրեց մի ուժեղ միտք և այդ այն է, որ ես պէտք է ստորագրեմ նրանց պահանջը: Պարոնայք, ահա այն թուղթը: (Հանում է կրպանից): Ես ստորագրում եմ: (Ստորագրում է): Դուք կեանքից զրկւած չէք, որովհետև ձեր մէջ է մարդկութեան լաւագոյնը:

ԿԱՏԵՆ. Հայրիկ, որքան բարի էք:

ՏԵՍԻ. 17.

Ա. ՂԷ. Բ Ա Ա Ն Դ Ր Ը:

Ա. Ղ. Ք Ս Ա Ն Դ Ր. Մեր բանւորները ...

ՌՈՒԲԵՆ. Ինչպէս տեսնում էք:

Ա. Ղ. Ք Ս Ա Ն Դ Ր. Դուք այստեղ ...

ՄԻՔԱՅԵԼ. Ի՞նչու էք զարմանում:

Ա. Ղ. Ք Ս Ա Ն Դ Ր. Զէ որ դուք մեզ ատում էք:

ՌՈՒԲԵՆ. Իսկ դուք յարդանքով էք վերաբերում դէպի մեզ:

Ա. Ղ. Ք Ս Ա Ն Դ Ր. Ես երբէք թոյլ շեմ տալ ինձ. յարգելու ձեր դասակարգը:

ՄԻՔԱՅԵԼ. Բայց մենք նրա հակառակն ենք կատարում:

Ա. Ղ. Ք Ս Ա Ն Դ Ր. Զեզ ընտբել են այն:

ՌՈՒԲԵՆ. Մենք ճանանչում ենք ձեր հօլը:

Ա. Ղ. Ք Ս Ա Ն Դ Ր. Դու շատ կոպիտ մարդ ես:

ՌՈՒԲԵՆ. Դուք ճիշտ էք ասում:

Ա. Ղ. Ք Ս Ա Ն Դ Ր. Դուք բոլորդ էլ կոպիտ էք:

ՈՌԻԲԵՆ. Այն, աւելացրած նրա վրայ և մեր տղի-
տութիւնը:

Ա.ՂԷՔՍԱՆԴՐ. Դուք ոչինչ չէք ստանալ: Ես գիտեմ
կառավարիչը ձեր կողմն է, բայց մենք ուժեղ ենք:

ՄԻՔԱՅԵԼ. Դուք կարծսւմ էք:

Ա.ՂԷՔՍԱՆԴՐ. Ես համոզւած եմ:

ՈՌԻԲԵՆ. Դուք շափազանց ուշացել էք:

Ա.ՂԷՔՍԱՆԴՐ. Հայրիկ, դու ստորագրել ես:

ԳՐԻԳՈՐ. Ես բաւարարութիւն եմ տեղ նրանց պա-
հանջն:

Ա.ՂԷՔՍԱՆԴՐ. Անխիղմներ, դուք խարել էք հօրս,
դուք թալանում էք մեղ, դուք ուզում էք խլել մեր վերջի
շապիկը:

ՍԱԹԵՆԻԿ. Աղէքսանդր այդ ինչեր ես ասում:

Ա.ՂԷՔՍԱՆԴՐ. Այն, այն, նրանք աւագակներ են,
նրանք խարել են հօրս:

ԳՐԻԳՈՐ. (Չարանալով): Բաւական է, լոիր ոճրագործ
որդի, դու այստեղ հայրում ես մեղ ամենքիս, որովհետև
իմ տանն են նրանք: Ես երեխայ չեմ, որ կարելի լինի
ինձ խարել:

ՏԵՍԻՒ. 18.

Հ ո ի փ ս ի մ է ն:

ՀՈՒՓՍԻՄԵ. Դարձեալ սկսեցին:

ՄԻԿԱՅ. Աստւած սիրես, դու գնա քո դործի, գի-
տես, որ նա իր խիղճը կորցրել է:

ՄԻՔԱՅԵԼ. (Աղէքսանդրին): Պարոն, դուք մեղ անւա-
նեցիք զող, աւագակ, անխիղջ, կոպիտ, և այլն...
բայց մենք ձեղ ոչինչ չը ասացինք, գուցէ դուք թոյլ կը
տաք ձեղ աւելի շատ բան ասել, ասացէք, մենք սպասում ենք:

Դուք լոռում էք, երկի ոչինչ չէք ուզում ասել, որով-
հետև ձեր խղճի թիւլադրութիւնը վերջացաւ, Զեր խօսերը
լսեցին ամենքը, բայց արդեօք լսեցին ձեր սեփական
ականջները:

Ա.ՂԷՔՍԱՆԴՐ. Դուքս գնացէք այստեղից:

ՄԻՔԱՅԵԼ. (Չարանալով): Մենք այստեղ մնալու իրա-
ունք ունինք, որովհետև աշխատանքի դաւակներ ենք: Թող
դուրս գան ձրիակեր՝ փչացածները, որոնք արժանի չեն
մնալ իրաւաւոր գահինձում:

Ա.ՂԷՔՍԱՆԴՐ. Աւաղակներ:

ԳՐԻԳՈՐ. (Բարկացկուտ): Լոիր քեզ ասում եմ:

ԿԱՏԵՍ. Դու իրաւոնք չունիս նրանց այստեղից ար-
տաքսելու:

Ա.ՂԷՔՍԱՆԴՐ. Ես եմ այս տան տէրը:

ՈՌԻԲԵՆ. Դուք այս տան խելագարն էք:

Ա.ՂԷՔՍԱՆԴՐ. Սրիկայ: Դու անւանում ես ինձ խե-
լագար իմ սեփական տան մէջ:

Ես ձեղ կը խեղտեմ, ոտնատակ կը տամ և փոշու
հետ, կը հաւասարացնեմ: (Ընկնում է):

ՎԱՐԱՊՈՅՑՐ. ✽

Հոգա շինու նորս չե՞տիշ մեց ո՞ք հույս քաք
ուղարկով զի՞չ սպասարկի ոմայ հոգաբանի մնալով զի՞ն մանէ
մոխայնս ո՞ն միջերով զօնըն ըստ դաշտան մնալով

ուղարկում զայնով սպաք ՊՐԵՄԻՆԻ. Ա. Ա. Ա. Ա.

առջ արած և թուալո զի՞ն (այսաւան) Լինի. Ա. Ա.
ունի ո՞ն զմինաւոր մահապատճեն մանէիցու պահին քիմ
մնէ մասնաւոր պահապատճեն զմինաւոր մասնաւոր պահին
առանձիւար զաւատով լուսն այսու

ուղարկում ՊՐԵՄԻՆԻ. Ա. Ա. Ա. Ա.

ո՞ն հասու չեզ պահ լուսագույնս) Ա. Ա. Ա. Ա.
ուս պահապատճեն զմին ուղարկում զմին պահապատճեն առանձիւար

ո՞յլու մաս ուս ո՞ն ամ ՊՐԵՄԻՆԻ. Ա. Ա.

ո՞յլ մաս ուս ուղարկում զմին պահ պահապատճեն առանձիւար

ո՞յլ ո՞ն ու համարման ուղարկում ՊՐԵՄԻՆԻ. Ա. Ա. Ա.
ո՞յլ մաս մախափելու ո՞ն զարու

չափի և կամ ո՞ն բախտան հետուի ո՞ն ո՞ն
(Յանուար) համարպատճեն ո՞ն առանձիւար

*** . ՊՐԵՄԻՆԻ ***

առանձիւար մաս ուղարկում ՊՐԵՄԻՆԻ
ունի ո՞ն առանձիւար զմին պահապատճեն ՊՐԵՄԻՆԻ
ո՞յլ ո՞ն ո՞յլ առանձիւար զմին պահապատճեն ՊՐԵՄԻՆԻ
ո՞յլ ո՞ն ո՞յլ առանձիւար զմին պահապատճեն ՊՐԵՄԻՆԻ

ՉՈՐՐՈԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Բեմբ ներկայացնում է Պետրոսի բնակարանը. փոքրիկ սե-
նեակ. մի գրասեղան եւ մի հասարակ սեղան. մի բանի
արողներ, դեպի փողոց պատուհան:

ՏԵՍԻ 1.

Պետրոսը մենակ, նստած է սեղանի մօտ ինչ որ գրում է:
Քիչ յետոյ զալիս է Արամը՝ նիհար և գունատ է:

Ա. Բ. Ա. Բարի երեկոյ: (Չեոք է տալիս): Գրմամ ես:

ՊԵՏՐՈՍ. Այս: (Շարունակում է գրել): Այսօր լրագիր
կարդացել ես:

Ա. Բ. Ա. Ոչ: (Պետրոսը տալիս է լրագիրը Արամին):

ՊԵՏՐՈՍ. Կարդայ:

Ա. Բ. Ա. (Քիչ ժամանակ կարդալուց յետոյ): Գարձեալ
անձնասպանութեան: Որքան ժանր է, ծնւել, մեծանալ,
մեռնել, ոչնչանալ, կամ լաւ, բախտաւոր ապրել, ինչու
համար է այդ բոլորը: Ես զիտես երազումս տեսայ Լիզային.
նա այնպէս գունատ էր: (Լաց է լինում):

ՊԵՏՐՈՍ. Դու լաց ես լինում:

Ա. Բ. Ա. Ախ, եթէ իմանայի ով էր Լիզայի անձնա-
սպանութեան պատճառը այն ժամանակ գուցէ մոռացու-
թեան տայի. դժւար է մոռանալ անցեալը, ես սիրում էի
նրան:

ՊԵՏՐՈՍ. Հանգստացիր, արդէն ուշ է:

ԱՐԱՄ. Ես գիտեմ, բայց ծանր է մոռանալ, Մի ամիս
է, որ ես տանջում եմ:

ՊԵՏՐՈՍ. Գիտեմ, որ ծանր է, բայց չէ որ դու քեզ
տանջում ես:

ԱՐԱՄ. Ես սպասում եմ մահւան հրեշտակին: Միայ-
նակ եմ, ինձ ոչ ոք չէ կարող ուրախացնել, միայն գերեզ-
մանի մէջ կարող եմ ես, իմ հանգիստը գտնել:

ՊԵՏՐՈՍ. Երեխայ չես, ինչեր ես մտածում:

ԱՐԱՄ. Առանց նրան, ես անկարող եմ ապրել: Ծանր
է ինձ համար կեանքը: (Լաց է լինում):

ՊԵՏՐՈՍ. Լաւ, հանգստացիր. շուտով հայրենիք կը
գնաս և մոռացութեան կը տաս բոլոր անցեալը:

ԱՐԱՄ. Երբէք, երբէք ես նրան չեմ մոռանալ:

ՊԵՏՐՈՍ. Լսել ես. Ներսէսը անձնասպանութիւն է
դորձել:

ԱՐԱՄ. Անձնասպանութիւն ... Ներսէսը: ...

ՊԵՏՐՈՍ. Կինը դաւաճանել է և նա վերջ է տեղ
կեանքին:

ԱՐԱՄ. Կինը ...

ՊԵՏՐՈՍ. Եյն, կինը: ...

ԱՐԱՄ. Անձնասպանութիւն այն էլ ատրճանակով,
սոսկալի է:

ՊԵՏՐՈՍ. Եյն, սոսկալի է ...

ԱՐԱՄ. Զարհուրելի է:

ՊԵՏՐՈՍ. Եյն զարհուրելի է:

ԱՐԱՄ. Իսկ եթէ մարդը տանջում է:

ՊԵՏՐՈՍ. Այդ միենայն է:

ԱՐԱՄ. Անձնասպանութիւնը այն, սոսկալի է և միե-
նայն ժամանակ զարհուրելի: Դէ՛ մնաս բարով: (Զեռ է
տալիս):

ՊԵՏՐՈՍ. Այսպէս շուտ ուր:

ԱՐԱՄ. Տուն: Գրիլ չեմ խանգարիլ քեզ:

ՊԵՏՐՈՍ. Չե՞ս գնալու դասախոսութեան:

ԱՐԱՄ. Ոչ: Իսկ դու:

ՊԵՏՐՈՍ. Ես գնալու եմ:

ԱՐԱՄ. (Նամակը տալով): Այս նամակը քոնն է:

ՊԵՏՐՈՍ. Նամակ:

ԱՐԱՄ. Այն, բայց խօսք տուր, որ հիմայ չես կար-
դալ:

ՊԵՏՐՈՍ. Ի՞նչու:

ԱՐԱՄ. Այնալու:

ՊԵՏՐՈՍ. Եթէ պահանջում ես կը կատարեմ: Քո
գլութիւնն է:

ԱՐԱՄ. Այն, ես եմ գրել:

ՊԵՏՐՈՍ. Վաղը կը գաս չէ:

ԱՐԱՄ. Զը գիտեմ: Դէ մնաս բարով (Գնում է):

ՊԵՏՐՈՍ. (Նայում է նամակի երեսը և զնում սեղանի
գրալ): Խեղճ Արամ: (Ծրջում է): Այնպիսի ստոր մարդուն,
այնպէս աղնիս բարի կին, իսկ օր. Կատեան կարծես,
նոյն ընտանիքից չէ: (Փոքր ինչ շրջում է և դարձեալ շարու-
նակում է գրել):

Դ ա ռ ւ զ ա:

ՏԵՍԻԼ. Յ.

Մտնում է Կատեան, տիսուր և գունատած:

ՊԵՏՐՈՍ. (Չարմացած): Դուք էք:

ԿԱՏԵՍ. Այն, ես եմ, ներկեցէք. ես ձեզ խանդարեցի:

ՊԵՏՐՈՍ. Սնմիտ, ի՞նչու համար ես եկել: Հարևանները ...

ԿԱՏԵՍ. Մի վանդէք ինձ, ես ինքս այս բռպէիս կը գնամ:

ՊԵՏՐՈՍ. Ձեզ կարող են տեսած լինել: Մենք կորած ենք:

ԿԱՏԵՍ. Ինձ ոչ ոք չը տեսաւ. Այժմ միենոյն է ինձ համար:

ՊԵՏՐՈՍ. Ասացէք ի՞նչու էք եկել, գիշել է:

ԿԱՏԵՍ. Ես կը գնամ ...

ՊԵՏՐՈՍ. Բայց ի՞նչու ես այդպէս գունատ:

ԿԱՏԵՍ. 2ը գիտեմ: Դու առաջ գալիս էիր մեր տուն, բայց յետոյ ...

ՊԵՏՐՈՍ. Բայց յետոյ Աղէքսանդրը արգելեց: Ի՞նչպէս է տիկին Սաթենիկը:

ԿԱՏԵՍ. Ես ինքս չը գիտեմ:

ՊԵՏՐՈՍ. Դուք չը գիտէք:

ԿԱՏԵՍ. Նա թողել է Աղէքսանդրին:

ՊԵՏՐՈՍ. Ահա թէ ինչ:

ԿԱՏԵՍ. Աղէքսանդրը իբրև խելագար. ինքը չը գիտէ, թէ ի՞նչ է անում:

ՊԵՏՐՈՍ. Նա կուռմ է իր խղճի դէմ, այլև չի կարող հանդիստ ապեկ:

ԿԱՏԵՍ. Մայրս ամբողջ օրը լաց է լինում:

ՊԵՏՐՈՍ. Այն, լաց է լինում և օր. Լիդայի մայրը: Ի՞նչպէս է Գրիգոր Գասպարիշը:

ԿԱՏԵՍ. Լաւ է:

ՊԵՏՐՈՍ. Քիչ առաջ իմ ընկերը այստեղ էր, եթէ դուք տեսնէիք նրան, թէ ինչպէս էր լաց լինում, վշտանում: Նա սիրում էր հանգուցեալին:

ԿԱՏԵՍ. (Վերջներու սեղանի վրալից մի լուսանկար): Լիդայի նկարն է: Որքան գեղեցիկ է:

ՊԵՏՐՈՍ. Այն, Բայց գիտեր շատ գեղեցիկ լինելը երկիրակի է, որովհետեւ մարդիկ ստոր են, նրանք իւրաքանչիւր քայլափոխում ոճրագործութիւններ են անում.

ԿԱՏԵՍ. (Նկատում է սեղանի վրա դրած նամակը): Այս ինչ նամակ է: (Կարդում է ծրարի նրեւը): „Ո՞վ որ, չը լինես, իմ կարգացող, մի ատիլ ինձ, ես չափաղանց վիրաւորված էի“:

ՊԵՏՐՈՍ. Ընկերս է գրել, որի մասին քիչ առաջ ասացի:

ԿԱՏԵՍ. Նա բանաստեղծ է:

ՊԵՏՐՈՍ. Այն, երրիմն զբում է թերթերում, երկի ստանաւոր է գրել, ինդիրեց իր ներկայութեամբ չը կարդալ, ամաշում է: Այժմ մենք կարող ենք կարդալ. (Բացում է նամակը և կարդում): Սիրելի Պետրոս! Ներիր ինձ, ցում է նամակը և կարդում): Սիրելի լիդայից բաժնեցից: Ես գնում ստիպւած էի ընդմիշտ բաժնեւել մարդկանցից: Ես գնում եմ ապաստան գտներու Լիդայի մօտ, այստեղ ես մենակ էի: Սիրելի ընկեր, այս նամակը կարդալու ժամանակը չի վագես ինձ վիրելու, որովհետեւ ես կենդանի չեմ լինիլ: Վերապահ ընդմիշտ: Քա Արամ:

ԿԱՏԵՍ. Դուցէ ուշ չէ, աշխատեցէք իսկոյն փրկել նրան:

ՊԵՏՐՈՍ. Այն. այն, նա այստեղ մօտ է՝ մի քանի քայլի հեռաւորութեան:

ԿԱՏԵԱ. Շտապեցէք Աստւած սիրէք:
ՊԵՏՐՈՍ. Դժմւք կը մնաք այստեղ:

ԿԱՏԵԱ. Ես ձեզ կը սպասեմ: (Պետրոսը գնում է շտապով): Ես ոճրագործի քայլն եմ, ով գիտէ նա արդէն իրան սպանած լինի և սա կլինի երկրորդ զոհը: (Լսում ոտքերի ծայն: Կատեան սարսափում է): Այստեղ են գալիս, Աստւած իմ, ես կորած եմ: (Լսում է բեմի հետևից աղմուկ): «Սպանւած է, սպանւած է»:

ԿԱՏԵԱ. Սպանւած է, մարդիկ վագում են ... Աստւած իմ: (Հնկնում է մահճակալի վրայ: Պառզայից յետոյ մտնում է Պետրոսը):

ՏԵՍԻԼ. 4.

ՊԵՏՐՈՍ. Սպանւած է:

ԿԱՏԵԱ. Մասկալի է:

ՊԵՏՐՈՍ. Աւելի քան' սոսկալի: Ես մեղաւոր եմ, որովհետեւ ոճրագործին պաշտպան եմ հանդիսացել:

ԿԱՏԵԱ. Զէ որ ծնողների նիւթական պատճառով:

ՊԵՏՐՈՍ. Բայց, Արամի ինչ գործն է հանգրւցեալի ծնողների համար մտածել: Ստոր, անազնիւ, անխիղճ մարդ, որքան տանջանք, արտասուքի խոշոր կաթիլներ կայ քո ոճրագործութեան մէջ:

ԿԱՏԵԱ. Մի ատիլ ինձ Պետրոս, չէ որ ես մեղաւոր չեմ, որ իմ եղբայրը ոճրագործ է:

ՊԵՏՐՈՍ. Ես քեզ շեմ մեղագրում, ես գիտեմ, որ իւրաքանչիւր մարդ ինքն է պատասխանատու իր խղճի առաջ, ինչով ես դու մեղաւոր, որ քո եղբայրը ոճրագործ է, Կատեա, դուք պարտաւոր էք ձեզ նւիրել կեանքին:

ԿԱՏԵԱ. Ասածէք, սովորեցրէք, ես ամեն բան կանեմ:

ՊԵՏՐՈՍ. Այլևս անկարելի է լոել. պէտք է աշխատել

դժբախտի և տառապեալների համար, որպէսզի ուժեղը չը կարողանայ ոչնչացնել թոյլերին: Աշխարհը թացէ, խոնաւ է դժբախտի արցունքից և նա միշտ հիւանդեցնում է առողջներին: Մենք և ամենքս հիւանդ ենք, չի կարող մեզ բժշկել, ոչ բժիշկը և ոչ էլ բնութեան թարմ օդը: Մեր բժիշկը մենք պիտի լինենք և այն ժամանակ մենք կարող ենք մեզ առողջ զգալ:

ԿԱՏԵԱ. Դու որքան լաւ ես խօսում. քեզ հետ մինչև աշխարհի ծայրը կը գամ:

ՊԵՏՐՈՍ. Դու ինձ երբէք շես դաւաճանել:

ԿԱՏԵԱ. Ես քեզ հետ մեռնեմ:

ՊԵՏՐՈՍ. Այս, մենք արցունքները կը չորացնենք և ոճրագործներին արդարագատութեան ձեռքը կը տանք: Երկու անմեղ զոհեր, չէ՞ որ նրանք բնութեան ծաղիկներ էին, չէ՞ որ զես նրանք պիտի բացէին, բայց ոճրագործը անխիղջ կերպով, քաղեց նրանց՝ դեռ չը բացւած:

ԿԱՏԵԱ. Դաս Պետրոս, յայնիր արդարագատութեան, թող պատժի իմ եղբայրը, որովհետեւ նա անթիւ հոգիներ է ոչնչացրել:

ՊԵՏՐՈՍ. Զափազնց ուշ է, երբ սպանւած են իմ ընկերները, էլ ինչու ոճրագործին յանձնել օրէնքի ձեռքը, թող ոճրագործի խիղճը իրեն դատի: Մարդու խիղճը մեծ դադաւոր է իրեն վերաբերեալ:

→ ՎԱՐԱԳՈՅՔ. ←

Գալուստ Արքայությունը գործութանուած է պահաժնի
ամառ՝ ինչ է զնուած ուշագույն պահաժը ամսաբար ի
շաբաթ և կամաց առ
ՃԻՆԳԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Մակարեանի բնակարանը. դահլիճը՝ առաջի գործողու-
թեան. փոքրիկ փոփոխութիւն:

ՏԵՍԻԼ 1.

Կատեան մենակ. քիչ յետոյ զալիս է աղախինը:

ԿԱՏԵԱ. Գնացիլ:

ԱՂԱԽԻՆ. Այն, գնացի:

ԿԱՏԵԱ. Ի՞նչ ասաց:

ԱՂԱԽԻՆ. Ասաց կը զամ: Նա առաջ չէր ուզում
գալ, բայց երբ ասացի որ, դուք միշտ լաց էք լինում և
կարօտք քաշում, նա համաձայնեց:

ԿԱՏԵԱ. Նա առողջ էր:

ԱՂԱԽԻՆ. Առողջ էր: Նւագում էր դաշնամուրի վրայ,
ինձ տեսաւ թէ չէ զարմացաւ. ամենից առաջ ձեր մասին
հարցեց, յետոյ Գրիգոր Գասպարիչը, տիկնոջ:

ԿԱՏԵԱ. Իսկ Աղէքսանդրի մասին:

ԱՂԱԽԻՆ. Նոյնպէս: Ես ասացի, որ հիւանդ է,

ՀԹԻՓՍԻՄԵ. (Ներսից): Անեա ... (Աղախինը գնում է),

ԿԱՏԵԱ: Ոլքան վաս է կեանքը, ոլքան դժբախտ է
մարդը.

ՏԵՍԻԼ 2.

Մտնում է Սուրբէնը:

ՍՈՒՐԲԻՆ. (Փոքրիկ պառզայից յետոյ): Ասա Կատեա,

ի՞նչ անել, ես այնպէս ատում եմ կեանքը, ինձ թւում է
թէ մարդս ամենադժբախտն է աշխարհում: Տեսնում ես,
առաջի անգամն է որ քեզնից խորհուրդ եմ հարցնում,
մինչև այսօր կարծես մենք թշնամիներ ենք եղած. մենք
իրար ատում ենք, բայց չք որ մենք քոյր և եղբայր ենք:

ԿԱՏԵԱ. Թող թղթախաղը և այն ժամանակ կեանքը
ատելի չի լինիլ քեզ համար: Թող այդ դեխ կեանքը և
աշխատիր դէպի լաւը գնալ:

ՍՈՒՐԲԻՆ. Ինչպէս թողնել. ես ինքս ուզում եմ թող-
նել, բայց չեմ կարողանում:

ԿԱՏԵԱ. Զես կարողանում ... Միթէ դժւար է մոռա-
ցութեան տալ կեանքի վաս կողմերը.

ՍՈՒՐԲԻՆ. Այն, դժւար է:

ԿԱՏԵԱ. Մինչև այսօր իս քեզ չեմ ճանաչել իբրև իմ
հարադատ եղբայրը, որովհետեւ գու այնպէսի կեանք ես
վարել, որ թոյլ չեմ տեել ինձ, նոյն իսկ քեզ յետ խօսել,
բայց այսօր երբ գու ինձնից խորհուրդ ես հարցնում ուրա-
խութեամ, լսիր:

ՍՈՒՐԲԻՆ. Ես կը լսեմ: Ես ուզում եմ լաւ խօսքեր
լսել:

ԿԱՏԵԱ. Գիմնալիան թղղեցիր, որովհետեւ քո մէջ
ցանկութիւն չը կար կարգալու. Մասնաւոր կերպով պատ-
րաստում էիր, նա էլ թղղիր և միայն թղթախաղի յե-
տեկից ես ընկել: Ասա, ինչ լաւ բան կայ քո մէջ, ինչ է
տալիս նա մարդուն: Հայրիկը քեզ ատում է, կարծես դու
նրան որդին չը լինես, այդ բոլորը նրանից է, որ դու քեզ
չես կարողանում պահել, չես կարողանում հասկանալ և
ըմբռնել կեանքի նպատակը: Սուրէն ինդրում եմ, թող քո
այդ շուայլ կեանքը, չք որ հասակում թոյլատրելի չէ
դանազան գերասանութիների հետեւ ընկնել. անցեալ օրը
թատրօնում ընկերուհիներս իմ երեսիս էին խօսում: Դու

Նստած լօժայում ինչ որ շքեղ հագնւած կնոջ հետ, ես այնպէս ամաշեցի, մինչև անգամ չը կարողացայ նրանց պատասխանել:

ՍՈՒՐԵՆ. Ալո՞ ...

ԿԱՏԵԱ. Ծանր է, բայց ինձ համար ոռքան ծանր էր, երբ ընկերուհներս մատով էին ցոյց տալիս քո վրան: Սուրէն, կայ մաքուր կեանք, երբ մարդս ծառայէ դրան, այն ժամանակ նրա խիղճը նոյնպէս մաքսւր կը լինի: Օրինակ, վերցրու Աղէքսանդրին, նրա խիղճը տանձում է, նա գիշեր ու ցերեկ լաց է լինում. այժմ նրան չի օգնի, ոչ լացը, ոչ ազգատին փող տալը, և ոչ էլ բարի լինելը, որովհետեւ արդէն ուշ է: Խողըրում եմ. քանի ուշ չէ՝ վերադարձիր լաւ կեանքի գիրկը, գու գեռ երիտասարդ ես:

ՍՈՒՐԵՆ. Դու ինչպէս լաւ ես խօսում: Ես այսպիսի խօսքեր երբէք չեմ լսել: Դու միշտ ինձ հետ խոռով ես եղել, Սաթենիկը ինձ վրայ ուշաղրութիւն չէր դարձնում, հայրիկը նոյնպէս, ինձ ինչ էր մնում անել—գնալ այնտեղ՝ ընկերների մօտ և ինչ որ նրանք էին անում, ես էլ սովորում էի: Ես կը վեռազարնամ դէպի լաւը, միայն որ ինձ վատ չասեն, մինչի այժմ, երբ ես լսում էի, որ իմ մասին մարդկի վատ են խօսում, ինձ թւում էր, որ լաէ, բայց այսօր, ես այլ կերպ եմ հասկանում: Ես հիմա լսեցի Աղէքսանդրի ձայնը, նա տանջում է, հասկանալ չի լինում նրան. կամ կանչաւ է Սաթենիկ, կամ Լիզա:

ԿԱՏԵԱ. Ուշ է նրա համար, այլևս նա անկարող է հանգստութեան ապաստան գտնել:

ՍՈՒՐԵՆ. Մի ատիլ ինձ կատեա, ես կը աշխատեմ լաւ լինել, ես կը մոռանամ վատ կեանքը, ես ուզում եմ ազնիւ մարդ դառնալ:

ԿԱՏԵԱ. Ես քեզ չեմ ատում: Այսօր հայրիկը շատ ուրախ է, շուտով կը գայ, դիմիր նրան և ներում խնդրիր քո յանցանքների համար:

ՍՈՒՐԵՆ. Ես դողում եմ նրա հետ խօսելիս, որովհետեւ իսկոյն շաբանում ու հայհոյում է:

ԿԱՏԵԱ. Դու ասա, որ ուզում ես խօսել հետը:

ՏԵՍԻԼ 3.

Մտնում է աղախինը:

ԱՂԱԽԻՆ. Օրիորդ տիկինը ձեզ կանչում է: (Գնում է):

ԿԱՏԵԱ. Իսկոյն: (Սուրէնին): Լսիր, առածներս չը մօռանամ: (Գնում է):

ՍՈՒՐԵՆ. Ոչ ոք իմ վատը չի ցանկանում: Ես կարծում էի, որ քոյքս իմ թշնամին է:

ՏԵՍԻԼ 4.

Մտնում է ծառան և անցնում միւս սենեակը:

ՍՈՒՐԵՆ. (Ծաւալին): Ներիր ինձ Գասպար, Ես քո վրայ շատ եմ բարկացել, գու ծեր ես, բայց ես, քեզ հայհոյել եմ: Ներիր ինձ, ես այնպէս փոշմանել եմ:

ՎԱՌԱՅ. Աստւած ների: (Գնում է):

ՍՈՒՐԵՆ. Երկի ատում է ինձ: Նա ես ինձ հետ չի ուզում խօսել:

ՏԵՍԻԼ 5.

Մտնում է Գրիգորը:

ԳՐԻԳՈՐ. (Սուրէնին): Դու տաննես: Ու՞ր էիր այս գիշեր:

ՍՈՒՐԵՆ. Ընկերոջս մօտ:

ԳՐԻԳՈՐ. Ընկերոջ մօտ, մինչև ժամը մէկը:

ՍՈՒՐԵՆ. Այն, ես ուրիշ տեղ չեմ եղել: Հարիկ, ես ուզում եմ ձեզ հետ խօսել:

ԳՐԻԳՈՐ. Ի՞նչ է, դարձեալ փող:

ՍՈՒՐԵՆ. Ոչ, ինձ այլևս փող հարկաւոր չէ, ես փողը ատում եմ:

ԳՐԻԳՈՐ. Ասա, ասա տեսնեմ:

ՍՈՒՐԵՆ. (Մոտենում է և համբուրում հօր ձեռքը):
Հայրիկ, ներիր ինձ, ինչ որ արել եմ, ինձ թւում է, որ
բոլորը վատ է եղել, ես լաւ բանի միշտ հակառակն եմ
հասկացել և ամեն կերպ աշխատել եմ հաւատալ ինքս ինձ,
բայց այժմ հասկանում եմ, որ ես սխալ եմ եղել: Ներիր
ինձ, ես գիտեմ, որ քեզ շատ եմ շարացրել, բայց չէ որ,
ես այնքան մեղաւոր չեմ, դուք հայրս էք, բայց ձեղնից
երբէք մի քաղցր խօսք չեմ լսել: Դուք երբէք ինձ ցոյց
չէք տեղ կեանքի ուղիղ ճանապարհը. երբ ինձ փող է
հարկաւոր եղել, դուք չէք ինայել, մէկ բուրլու փոխարէն
տւէլ էք տասը, բայց այն փողը ինձ գլորել է անդունդը,
ես չէի կարողանում լոյս տեսնել, փողը իմ ձեռքին, ես
միշտ խաւարն էի որսնում, որովհետեւ լոյսը ինձ համար
տաելի էր: Ես կեանքը տեսնում էի խաւարի մէջ, հայրիկ
այժմ խաւարի կեանքը ատելի է ինձ համար, ես զզւել եմ:
Ներիր ինձ, ես շատ եմ խարել ձեզ, բայց այժմ հասկա-
նում եմ, որ մարդուն խարել հարկաւոր չէ: Ասա հայրիկ,
ինչ կարող էի սովորել Աղէքսանդրից, նա թողնում էր
մեզ միայնակ, նա կարծես մեր ընտանիքին չէք պատկա-
նում: Ես մեծացել եմ, բայց ինչպէս, վատ, առանց ճանա-
շելու, թէ ինչ է իմ պարտականութիւնները: Ես տեսնում
եմ, որ Աղէքսանդրը այժմ տանջւում է, որովհետեւ նա իր
կեանքում լաւ բան չի արել: Հայրիկ, ներիր ինձ, ես
ուզում եմ լաւ լինել, օգնիր ինձ, որպէսզի չի խորտակեմ:
Ես այնպէս ուզում եմ լաց լինել: (Լացէ լինում):

ԳՐԻԳՈՐ. Ներում եմ քեզ որդի: (Արտաւում է): Ո՞վ
է սովորացրել քեզ այս խօսքերը: Ես կարծում էի դու խօ-
սել շը գիտես:

ՍՈՒՐԵՆ. Ես ձեր որդին եմ, բայց ինձ չէք ճանաշում:

ՏԵՍԻԼ. 6.

Մոտնում է աղախինը:

ԱՂԱԽԻՆ. Մուրճը պատրաստ է: (Գնում է: Գիշ յետոյ
գնում են Գրիգորը և Սուրէնը):

ՏԵՍԻԼ. 7.

Մոտնում է Աղէքսանդրը:

ԱՂԷՔՍԱՆԴՐ. (Պարզացից յետոյ): Որքան վատ են
մարդիկ. որքան զգւելի, ինչու համար եմ ես մարդ. ինչու
ես անասուն չեմ: Ի՞նչու համար ես զագան չեմ: (Միւնոյն
ժամանակ ծառան գալիս է և անցնում միւս սենեակը: Ծառալին):
Սպասիր էշի ականջ, ուր եմ գնում:

ԾԱՌԱՅ. Զանգը տալիս են:

ԱՂԷՔՍԱՆԴՐ. Սպասիր, եկ ինձ մօտ: (Ծառան մօ-
տենում է): Ասա ինչ անել:

ԾԱՌԱՅ. Ես շը գիտեմ:

ԱՂԷՔՍԱՆԴՐ. Դու պարտաւոր ես իմանալ, դու ծեր
ես, բայց յիմար ես:

**ԾԱՌԱՅ. Մի հայհոյիլ ծերուկին: Կ անգստացիր Աղէք-
սանդր:**

ԱՂԷՔՍԱՆԴՐ. Ասիր, ինչպէս հանգստանամ:

ԾԱՌԱՅ. Բարութիւն արա: Դնայ ներեղութիւն ին-
դրիր քո կնոջից, նա կը գայ, նա քո պաշտպանն է:

ԱՂԷՔՍԱՆԴՐ. Նա չի գալ, նա ինձ ատում է: (Հս-
տում է զանգի ծայն): Դնայ բացիր դուռը: Եթէ ինձ հարցնեն,
ասա տանը չէ: (Ծառան գնում է): Նա ասաց, ինձ մի հայ-
հոյիլ. Ա՛ որքան անպիտան եմ ես, որքան ստոր և անխիղճ,
մւր է կինս, մւր է այն աղջիկը, մւր է այն պարոնը: Դա-
լիս են այստեղ, ես չեմ ուզում, որ մարդիկ ինձ տեսնեն:
(Գնում է):

ՏԵՍԻԼ. 8.

Ասթենիկը և ծառան:

ԱԼԹԵՆԻԿ. Դու առողջ եմ ֆասպար:

**ԾԱՌԱՅՅ. Առողջ եմ տիկին, ձեզ առողջութիւն եմ
ցանկանում: Յայտնել ձեր գալուստը:**

ՍԱԹԵՆԻԿ. Յայտնիք Կատեային:

ԾԱՌԱՅՅ. Շատ բարի, (Դնում է):

ՏԵՍԻԼ. 9.

Մտնաւմ է Կատեան:

**ՍԱԹԵՆԻԿ. Կատեա ... (Համբուրում նն Սաթենիքը
լաց է լինում):**

ԿԱՏԵԱ. Հանգստացէք: Ինչպէս նիհարել էք:

**ՍԱԹԵՆԻԿ. Ի՞նչ անել, ինձ համար այնպէս վատ է:
Աղէքսանդրը հիւանդ է:**

**ԿԱՏԵԱ. Այն, բժիշկը թոյլ չի տալիս նրան տանը
մնալ:**

ՏԵՍԻԼ. 10.

Գրիգորը, Հոփիսիմէն և Սուրէնը: Բարեւում են:

**ԳՐԻԳՈՐ. Ինձ թւում է, որ նորից մեր գերդաստանի
ուրախ կեանքը կըսկսվի: Այսօր Սուրէնը ներում խնդրեց
ինձնից և երդւեց սրանից յետոյ իրեն լաւ պահել: Որքան
մենք ուրախ ենք, քեզ՝ Աստւած ինքը ուղարկեց:**

ՍԱԹԵՆԻԿ. Ես շուտով պիտի զնամ:

ԳՐԻԳՈՐ. Ու՞՞:

ՍԱԹԵՆԻԿ. Իմ հայրենական տունը:

***ՀՐԻՓՍԻՄՔ. Մնացիք այստեղ մենք քեզ շատ ենք
սիրում:**

ՍԱԹԵՆԻԿ. Մայրիկ, անկարող եմ այստեղ մնալ:

ԿԱՏԵԱ. Մնացէք, մեր տանը բոլորն էլ փոխւել են:

ՍԱԹԵՆԻԿ. Աղէքսանդրը ...

**ԿԱՏԵԱ. Նա հիւանդ է, գուցէ ձեր գալը նրան կը
առողջացնէ: (Միենոյն ժամանակ Գրիգորը և Հոփիսիմէն լուռ
լաց են լինում): Տեսնում էք հայրս և մայրս լալիս են,
նրանք լալիս են, որովհեակ նրանց կեանքի ուրախութիւնը
ոչնչացած է, խնդրում եմ մնացէք, մնացէք որպէսզի կա-
րողանաք շորացնել ծնողներիս արտասուքը:**

**ՍԱԹԵՆԻԿ. Կատեա, անկարող եմ: (Նրանց): Մի
լացէք: Ես շատ եմ տանջւել այս տանը, ես երկար եմ
լաց եղել և էլ' չեմ ուզում լաց լինել:**

**ՍՈՒՐԵՆ. Տիկին Սաթենիկ, գուցէ այժմ էլ ծիծա-
ղէք ինձ վրայ, բայց ես ինդրում եմ լսէք ինձ մի քանի
բոպէ: Դուք մի ժամանակ ինձ ատելով ատում էիք, գուցէ
այժմ էլ ատում էք, այդ միենոյն է ինձ համար: Տիկին
Սաթենիկ, ես այն Սուրէնը չեմ, ինչ որ առաջ էի. ինձ
համար անցեալը զգւելի է, ես ուզում եմ նոր կեանք
ստեղծել թէ ինձ համար և թէ բոլորիս համար: Մնա-
ցէք այստեղ, ես ձեզ կը լսեմ, երբէք ձեզ թոյլ չեմ
տալ լաց լինէք, երբ ժառան յայտնեց ձեր գալուստը,
իսկոյն վեր կացան իմ ծնողները սեղանի վրայից, և ես
նկատեցի նրանց գէմքի վրայ ուրախութեան ժակիտը: Մի
թոյլ տաք, որ նրանք նորից տանջւեն, նայեցէք նրանք
շարունակ լաց են լինում: Մի խօսք միայն ասացէք, այն
ժամանակ նրանք կը գաղարեն լաց լինելուց: Մենք ձեզ
չենք կարող մոռանալ: Մի մոռանար և դուք մեղ: Մենք
կը ապրենք սիրով, ես կորած չեմ ա. Սաթենիկ, իմ մէջ
ոչնչացած չէ կեանքը: Մնացէք, մնացէք այստեղ, մենք
նոր կեանք կը ստեղծենք և առանց յիշելու անցեալը կը
ապրենք երջանիկ:**

**ԳՐԻԳՈՐ. Ես ոչինչ չեմ կարող ասել քեզ աղջիկս,
տեսնում ես Սուրէնը ինչպէս է խօսում, նա ուզում է, որ
մենք նոր կեանք սկսենք:**

ՍԱԹԵՆԻԿ. Ծանր է ինձ համար, երկու տարի, ևս
այստեղ տանջւել եմ, երկու տարի, ձեր որդին ինձ ար-
տասալից մի կետնք է տւել:

ԳՐԻԳՈՐ. Այժմ նա հիւանդէ:

ՍԱԹԵՆԻԿ. Բայց չէ որ ինձ համար աւելի սոսկալի
կլինի՝ նրան հիւանդ տեսնելով:

ԳՐԻԳՈՐ. Աղջիկս, գուցէ դու այստեղ լինելով նա
առողջանայ: Համաձայնւիր, համաձայնւիր մնալ աղջիկս,
չէ որ ես քեզ սիրել եմ ինչպէս Կատեային:

ՍԱԹԵՆԻԿ. Գիտեմ, որ դուք ինձ համար եղել էք
ինչպէս հարազատ հայր, բայց անկարող եմ մնալ: Ես եր-
դուել էի երբէք այս տուն ոտ չը դնել, բայց այսօր նամակ
ստացայ Կատեայից: Ես վաղը ճանապարհում եմ:

ԳՐԻԳՈՐ. Վաղը ճանապարհում եմ: Ու՞ր:

ՍԱԹԵՆԻԿ. Մօսկւա, եղբայրս գնում է իր արետրա-
կան գործով ինձ էլ տանում է:

ՍՈՒՐԵՆ. Դուք գնում էք Մօսկւա:

ՍԱԹԵՆԻԿ. Այս:

ՍՈՒՐԵՆ. Դուք գնում էք այստեղ, բայց այստեղ,
այստեղ ձեր տունն է, դուք ապրել էք և ուզում էք լնդ-
միշտ հեռանալ այստեղից:

ՍԱԹԵՆԻԿ. Ես աշխատում եմ մոռանալ այն դժբախ-
տին, որ մինչև այսօր էլ աշքիս առաջ է նրա դէմքը, ես գալով
այս տուն նորից պիտի կեանքի դժբաղս ճակատագրի
հետ կռւեմ, բայց ես յոզնել էմ, այլիս չեմ ուզում
կռւել:

ԿԱՏԵԱՅ. Կեանքի կռիւը անվերջ է և նա ուրուականի
պէս մեզ միշտ իմաց է տալիս, երբ մենք մոռանում ենք
նրան:

ԳՐԻԳՈՐ. Գնանք պառաւ, թող երիտասարդները խօ-
սեն իրար հետ: Մենք մեր սենեակումն ենք: (Գնում են):

ԿԱՏԵԱՅ. (Սաթէնիկին): Մնացէք, մնացէք մեզ մօտ,
ինձ համար վատ է մենակութիւնը, ես այնպէս տանջւում
եմ:

ՍԱԹԵՆԻԿ. Դու շուտով կը ամուսնանաս, բայց ես,
ես նորից կսկսեմ տանջւել:

ԿԱՏԵԱՅ. Ես ... երբէք:

(Հսում է մեղմ երգի ձայն):

ՏԵՍԻԼ 11.

Մտնում է Պետրոսը շտապով:

ՊԵՏՐՈՍ. Մերոնք գալիս են այս կողմ: Դուք չէք
գալիս:

ԿԱՏԵԱՅ. Ի՞նչ կայ Պետրոս:

ՊԵՏՐՈՍ. Դուք միթէ չէք լսում, մարդիկ երգում են:
Դուք ա... Սաթէնիկ ... Այսօր բոլորն էլ փողոցներումն են,
այսօր տանը նստել ամօթ է, որովհետեւ մարդիկ երգում
են: Դուք տխուր էք: Ներեցէք, գուցէ ես խանգարեցի
ձեզ: Մնաք բարով: (Ուզում է գնալ):

ԿԱՏԵԱՅ. Դուք գնում էք:

ՊԵՏՐՈՍ. Այս: Ես երբէք չեմ գալ այստեղ, ես կար-
ծում էի գուք նոր կեանքի համար կարող էք կռւել, բայց
ես հասկացայ, որ ձեր կեանքը լաւ է և նորի կարիք չէք
զգում:

ՏԵՍԻԼ 12.

Մտնում է ծառան:

ԾԱՌԱՅ. Ահագին ամբոխը գէպի այս կողմն է գա-
լիս:

ԿԱԾԵԱ. Ասացէք, ո՞ի՞նչ կայ այսօր։ ՊՈՒՇՎՐ
ՊԵՏՐՈՍ. Այսօր խղճի տօնի է։ Մարդիկ իրար չնոր-
հաւորում են և ձեռք ձեռքի տւած երգաւմ։ ԱՅՆՈՒ
ԿԱԾԵԱ. Խղճի տօնը՝ Խօսքամնելն չ առի դանաշ նոն
ՓԵՏՐՈՍ. Այս, զնանք չուտով, ում խղճը մաքուր է
նա պարտաւոր է դուրս դալ և միանալ նրանց, քանի որ
ուշ չէ. շտապենք, որովհետև կարող ենք հետ մնալ։

ԿԱԾԵԱ. Գնանք, ես ուզում եմ տօնել այսօրւայ
տօնը։

ՊԵՏՐՈՍ. Ահա լուսում է երաժշտութիւնը։

(Հաւում է երաժշտութիւնը):

Դուք պ. Սուրբն, մի՞թէ չէր մտածում ապագայ
կեանքի համար, ել ինչու էք կանգնել, ձեզ նոյնպէս կան-
չում են, այսօր զատակարգի բաժանումը չէ, շտապեցք
միանալու միւսներին այնժամանակ գուրք ձեզ երջանիկ կը
զգաք։ Զեր եզրալիք չի կարող միանալ նրանց, որովհետև
նրա խղճը մաքուր չէ։ Մենք չտապում ենք, արդէն ժա-
մանակն է։ Մենաք բարով։ (Գնում են Պետրոսը և կատան)։
ՍՈՒՐԵՆ. Նրանք զնացին միանալու նրանց, իսկ մենք,
մենք մնացինք միայնակ։ Չէ՞ որ ամօթ է մեզ, զնանք և
մենք ա. Սաթենիք, այնտեղ ոչ ոք իրաւունք չունի մեզ
վրայ իշխանութիւն անել, որովհետեւ ամենը հաւասար են։
Ես գնում եմ, ինձ թւում է, որ այսօրւայ տօնը նոր
կեանքի տօնն է, որին Պետրոսը անւանեց «խղճի» տօն։
այն, խղճի տօնն է, ելույթետև անխղճները այսօր տան-
ջում են։ Մնաք բարով, ինձ թւում է, որ ինձ կանչում
են։ Լսում էք, երգի ձայնը, ես գնում եմ այստեղ։ (Գնում է)։

ՍՍԹԵՆԻԿ. Նրանք առնում են, խղճի տօնը։ Խղճի
տօն, որքան անհասկանալի է ինձ համար, բայց չէ՞ որ ինձ
հարկաւոր է կեանք։ Է՞... ինչու համար մեալ այստեղ,
այնտեղ երգում են։ (Գնում է)։

ՏԵՍԻԼ. 13. Խոսկը. ՊՈՒՇՎՐ
Մտնում է Աղէքսանդրը շտապով։ ՊՈՒՇՎՐ
ԱՂԵՔՍԱՆԴՐ. Այստեղ մարդիկ երգում են, նրանք
ուրախ են, որովհետև նրանց տօնն է, բայց իմ տօնը, ուր
է իմ տօնը։ ԱՌ գուրք ինձ չէք հրաւիրում, գուրք ինձ ար-
տաքսում էք ձեր միջից, ուրեմն ես ինքս կը գամ, ես թոյլ
չեմ, ես նոյնպէս տօնել եմ ուզում այս տօնը ինչպէս և
գուրք ամենքդ։ (Ուզում է գնալ, բայց միւնոյն ժամանակ երե-
ում է մի ստեր սպիտակ հագուստով շաղած մազերով մի
աղջիկ որ նմանեցնում է օր. Լիգային)։ ԱՌ ... դու ... ան-
մեղ զոհ։ (Չորում է)։ Խոնարում եմ քո առաջ, ներիր ինձ,
ես տանջւում եմ, ես միայնակ եմ, թոյլ տուր որպէսզի
գնամ նրանց հետ տօնելու այն մեծ տօնը, խնդրում եմ
մի արգելիք ինձ։ (Բարձրանում է)։ Որքան ծանր է ինձ
համար կեանքը։ (Ուրուականը անվայտանում է)։ Ի՞նչու հա-
մար ապրել։ Նա զնաց։ Ի՞նչու համար է մարդը։ Նա ան-
յայտացաւ, հարկաւոր է շտապել։ (Ուզում է գնալ, բայց
ստերը երեւում է, Աղէքսանդրը ընկնում է)։ Ասա, հրա-
մայիր ինչ որ կամենաս, միայն թոյլ առւր գնալ, ճանա-
պարհու մի կտրիլ, թոյլ տուր որպէսզի՝ ազատեմ սոսկալի
տանջանքից։ Խօսիր, խօսիր որպէսզի լսեմ քո ձայնը, ես
ուզում եմ, որ գու խօսես, իսկ ես լաց լինեմ։ Մի խօսք
միայն և այն ժամանակ խիթ կեանքս։ (Ստերը անյայ-
տանում է)։ Նա չը կամեցաւ ինձ հետ խօսել։ Ես չիմ կա-
րողանում զնալ այնտեղ, տօնելու այն մեծ տօնը, ես զըր-
կում եմ նրանից, ել ի՞նչու համար ապրել, այնտեղ տօ-
նում են, իսկ այստեղ տանջւում են։ (Արագ գնում է միւս
սենեակը, քիչ լետոյ լսում է ատրծանակի պայմոցը)։

ՏԵՍԻԼ. 14.

Մտնում է ծառան քիչ լետոյ Գրիգորը և Հորիփսիմէն. միւնոյն
ժամանակ լսում է երգի և երաժշտութեան ձայնը։

ԾԱՌԱՅ. Աղեքսանդրը. Աղեքստնդրը ...

ԳՐԻԳՈՐ. ՀՈՒՓՍԻՄԵՆ—(Միասին): Ի՞նչ է արել:

(Գնում են միւս սենեակը):

**ԾԱՌԱՅ. Երգի և երաժշտութեան ձայնը, արին և
մարդու կեանքը ... ահա խղճի տօնը:**



ՀՀ Ազգային գրադարան



NL0326958

25085

ԳԻՆԻ Է 40 Կ.

Адресъ: Баку, Типографія М. В. Касабова,
Воронцовская ул., д. Красильникова, *I. ГАРАМУ*.